Ե՞րբ է եղել մի դեպք, երբ եվրոպական երկրները կամ ԱՄՆ-ն առերեւույթ չհամագործակցեն ՀՀ իշխանությունների հետ: Հիշեցնեմ՝ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի խիստ պրոբլեմատիկ ընտրությունների ժամանակ էլ դիտորդները, խոսելով որոշ թերությունների մասին, այնուամենայնիվ ասել են, որ ընտրությունները չեն կեղծվել:

Կարդացեք՝ էջ 4

Մենակ կին եմ, 53 հազար թոշակ եմ ստանում, Հրազդանից գնում եմ Մարտունի, հիմա դուք ինձ ասեք՝ ես քարտով ո՞նց վճարեմ ավտոբուսի փողը: Որ իրենք Երեւանում են, գիտեն՝ մարզերում էլ մարդիկ կարող են տրանսպորտը քարտով վճարել: Պետությունը թոշակառուի մասին չի մտածում, իրենց ոնց ձեռք է տալիս, էդ ձեւով էլ անում են:

Կարդացեք՝ էջ 6

Որ ավանդույթներ է հիմնել Ժաննա Անդրեասյանը: Նա ոչ միայն Մաշտոցի նկարը հեռացրեց Այբբենարանից, այլեւ նրա օրոք կրթօջախների ֆեյսբուքյան էջերում իր ծնունդն են շնորհավորում: Մեզանում նման պրակտիկա չի եղել: Կրթության բազմաթիվ նախարարներ ենք ունեցել, սակայն նրանցից ոչ մեկին հրապարակավ ձոներ չեն նվիրել:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 23 (4158), 20 փետրվար, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Զրցախցիներից շարունակում ենք դժգոհություններ ստանալ, որ ՀՀ քաղաքացիության ընդունման հարցում միտումնավոր խոչընդոտներ են ստեղծում նրանց համար: Հիշեցնենք, որ Փաշինյանի իշխանությունը որոշեց արցախցիներին տրված հայկական անձնագրերը փոխել, քանի որ դրանք տրամադրվել էին 070 կոդով: 23-ից հետո շարունակ կոչ էին անում փոխել անձնագրերը, իսկ հիմա խոչընդոտում են՝ նոտարների կողմից ձեւական թերություններ հայտնաբերելով, էլեկտրոնային հերթագրումը խափանելով, դիմումներին ամիսներով ընթացք չտալով: Դիցուք, մեզ ասացին, որ կան մարդիկ, որ անցած տարվա նոյեմբերի վերջերին դիմել են քաղաքացիության համար, բայց մինչ օրս չեն ստացել: Իհարկե, պատկան գերատեսչությունից վերջերս վստահեցրին, որ նման բան չկա, սակայն, արցախցիների հաշվարկներով, այսօրվա դրությամբ առնվազն 19 հազար մարդ դիմել է քաղաքացիության հարցով ու բյուրոկրատական քաշքշուկների մեջ հայտնվել: Արցախցիները կասկածներ ունեն, որ իշխանությունները հասկացել են՝ նրանք հակաիշխանական դիրքորոշում ունեն, ընդդիմության էլեկտորատն են, ուստի միտումնավոր ձգձգում են նրանց փաստաթղթեր տալը, որպեսզի թույլ չտան, որ հունիսի 7-ի ընտրություններին մասնակցեն: Ըստ ՆԳՆ-ի՝ 2026 թվականի դրությամբ մոտ 30 հազար արցախցի ՀՀ քաղաքացի է դարձել, որից 9 հազարը՝ երեխա:

Պետական բյուջեից անցած տարեվերջին բաշխված միլիարդավոր դրամների պարգեւավճարները բաժանվել են խիստ անհամաչափ. գերատեսչությունների վերնախավը՝ վարչապետ, փոխվարչապետեր, նախարարներ, նրանց տեղակալներն ու վարչության պետերը, ստացել են հատկացվող ֆոնդի 80, իսկ շարքային քաղծառայողները՝ 20 տոկոսը: Պարգեւավճարներն իբրեւ թե տրամադրվում են կոնկրետ աշխատանքի դիմաց, ուստի այժմ կարեւորվել է, թե որ քաղծառայողին ինչքան գործ է մակագրվում, ինչքան հանձնարարություն է տրվում: Գերատեսչություններից մեկից մեզ պատմեցին, որ սա փոխել է հիմնարկներում աշխատանքի բնույթը՝ վերադասը սկսել է գործեր չմակագրել, ոմանք էլեկտրոնային Մալբրի համակարգում օրերով հանձնարարականներ չեն ստանում: Կամ մակագրում են իրենց սիրելի աշխատակիցներին, որպեսզի պարգեւավճարները բաշխելիս իրենք եւ իրենց յուրայինները փող ստանան: Ամսվա վերջում Մալբրի համակարգում կատարողական է կազմվում, եւ տեսանելի է դառնում, թե ով քանի նամակի է պատասխանել, քանի հանձնարարություն է ավարտին հասցրել, եւ ըստ այդմ էլ բաժանվում է հավելավճարը՝ ինչ-որ գործակիցներից ելնելով:

Բաթլ եմ առաջարկում

Բոլոր նրանք, ովքեր փորձում են իրենք իրենց եւ մյուսներին համոզել, որ «ամեն իշխանություն էլ թերություններ ունի», եւ հանդիմանում են մեզ, թե՝ «միայն վատն եք տեսնում, լավ բաները չեք տեսնում», առաջարկում եմ մրցույթ կազմակերպել՝ մենք թվարկենք վատը, իրենք՝ լավը, տեսնենք՝ ով կհաղթի: Եթե յուրաքանչյուր լավի դիմաց գոնե երեք հատ վատ բան չկարողացանք թվարկել, ուրեմն իրենք հաղթել են: Բայց պայմանով, որ չեն ասելու՝ պարտվեցինք, բայց հաղթեցինք, Կիրանցի պատն աննախադեպ ձեռքբերում է, մեր ինքնիշխանությունը վերջին 8 տարում անշեղորեն աճել է, ծայրագավառից դարձել ենք կենտրոն, կամ՝ Թրիփը մեզ մեծ եկամուտներ ու բարեկեցություն է բերելու եւ 100 տարվա անվտանգության երաշխիքներ: Եթե կարող ենք ադեկվատ մարդու լեզվով խոսել եւ թվարկել բոլոր հաջողություններն ու անհաջողությունները, կհասկանանք, որ համեմատելու եզր անգամ չկա: Արցախը կորցրինք, 5 հազար ջահել-ջիվան դրեցինք հողը, Գորիս-Կապան միջպետական ուղին հանձնեցինք, Տավուշից հողեր տվեցինք, իսկ մեզ խոստացված հողերը չստացանք: Ոչ մի արտադրություն այս տարիներին չկառուցվեց: 8 միլիարդով ավելացավ պետական պարտքը: Մարդու իրավունքների ասպարեզում գահավիժել ենք եւ հասել այնտեղ, որ սրբազանների են կալանավորում, կաթողիկոսին են սպառնում: Դատախազություն, քննչական ու հակակոռուպցիոն կոմիտեներ՝ զբաղված են քաղաքական հետապնդումներով: Բաքվում գերիներ ունենք: Դատարաններն արդեն հոգեւոր դաշտ են մտել եւ մեկ նախադասության համար հայտնի մարդկանց են ամիսներով կալանավորում: Սրբազանների ելքը երկրից փակում են եւ արգելում ժողովի մեկնել: Օդի աղտոտվածությունն ու ատելության խոսքը հասել են առասպելական չափերի: Անգամ իրենց միակ ձեռքբերումը՝ ասֆալտը, ձյան հետ հալվեց-գնաց:

Օրերս մի լուր էինք գրել, որ հրահանգ է իջել՝ արագ ազատել բանտերի նախնական կալանքների հատվածները: Մեզ ասացին, որ այս հարցում հատկապես ակտիվ աշխատանքներ են տարվում «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում, որը, ինչպես հայտնի է, նախկին եւ ներկա պաշտոնյաների, մասնավորապես ուժային բլոկում ծառայած անձանց պատժի վայրն է: Այս որոշումը, ըստ լուրերի, պայմանավորված է նախընտրական ճնշումներով ու ռեպրեսիաներով, որոնք իշխանությունը փորձելու է բանեցնել քաղաքական ընդդիմության նկատմամբ: Ըստ ամենայնի, նախապես կազմել են սցենարը, ընտրել զոհերին, որոնց մեծ մասը լինելու են նախկինում պաշտոն զբաղեցրած անձինք:

ՔՊ-ականները պարեկ են ծեծում

Գյուլագարակի համայնքապետի տեղակալ, ՔՊ-ական Արմեն Մարիկյանն իր ընկերների հետ 2023 թ. հունիսի 4-ին ծեծի էր ենթարկել Ստեփանավանի Դենդրոպարկի մոտակայքում ծառայություն իրականացնող պարեկներին: Դատալեքսից տեղեկացանք, որ Մարիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասով մեղադրանք է առաջադրվել, քանի որ նա, «2023 թ. հունիսի 4-ին, ժամը 17:00-ի սահմաններում գտնվելով ոչ սթափ վիճակում, ընկերների՝ Արմեն Մուրադյանի, Աշոտ Մուրադյանի եւ Մարատ Սուքիասյանի հետ «Դենդրոպարկ» կոչվող բուսաբանական այգի բարձրացող ճանապարհին խոչընդոտել է ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պարեկների կողմից իրականացվող աշխատանքներին, հնչեցրել են սպառնալիքներ եւ նրանց նկատմամբ գործադրել բռնություն, որից հետո Աշոտ Մուրադյանը դիմել է փախուստի»: Գործը դատաքննության փուլում է: Մեկ այլ քրեական գործով էլ է Մարիկյանն անցել. չունենալով տրանսպորտային միջոց վարելու իրավունք եւ գտնվելով ոչ սթափ վիճակում, մեքենա է վարել: Նրան առաջադրվել է մեղադրանք, եւ պատիժ է նշանակվել տուգանք՝ 340 հազար ՀՀ դրամի չափով: Սակայն բոլոր ՔՊ-ականները չէ, որ պատժվում են նմանատիպ արարքների համար. ամիսներ առաջ Արմավիրի Խոյ համայնքի ղեկավար Լյուդվիգ Յայլոյանի ազգականներն էին պարեկին ծեծելու համար ձերբակալվել եւ ազատ արձակվել: Պարեկին ծեծելու դեպք է եղել նաեւ Շիրակի մարզում: Այս աղմկոտ պատմության «հերոսն» էլ Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանի խորհրդական Գոռ Սարոյանն է, որը վերջերս է ազատվել աշխատանքից: Նա 2017-ին եւս մեկ քրգործով հայտնվել էր դատարանում՝ մեղադրյալի աթոռին, ուստի այս անգամ նրան մեղադրանք է առաջադրվել ՔՕ 297-րդ հոդվածով՝ խուլիգանության, եւ 452-րդ՝ պաշտոնատար անձին դիմադրություն ցույց տալու համար:

ԳԱՐԵԳԻՆ Բ-Ն ԱՅՍ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՔԱՆԻ՞ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ Է ԽՈՍԵԼ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Էդվարդ Անտինյանն** է:*

- Դուք եւ Շնորհապետական կուսակցության նախագահ Գուրգեն Սիմոնյանը համագործակցության հուշագիր ստորագրեցիք եւ առաջիկա պառլամենտական ընտրություններին պատրաստվում եք համատեղ մասնակցել: Ինչպե՞ս որոշեցիք միանալ, ի՞նչ ակնկալիքներ ունեք: Կկարողանա՞ք հաղթահարել անցողիկ շեմը եւ անցնել խորհրդարան: Եվ, ըստ Ձեզ, այսօր որո՞նք են առանցքային հարցերը, որոնց կցանկանայիք անդրադառնալ:

- Գուրգեն Սիմոնյանի հետ եմ որոշել համագործակցել, որովհետեւ հանդիպել ենք, շփվել ենք եւ հասկացել ենք, որ գաղափարակից ենք եւ կարող ենք համատեղ աշխատանք տանել: Թեպետ Հայաստանի Շնորհապետական կուսակցությունը նոր կուսակցություն է, մարդիկ երբեմն նորաստեղծ կուսակցություններին թերահավատորեն են վերաբերվում, ասում են՝ հերթականն է, սակայն կյանքը ցույց տվեց, որ բավականին կարճ ժամանակահատվածում մարդիկ սկսեցին բավականին շատ հետաքրքրվել կուսակցությունով: Մենք հարցումներ ենք կազմակերպում եւ լսում ենք մարդկանց տեսակետները: Բաց դաշտը լրացնելու խնդիր կար, քանի որ քաղաքական դաշտը բավականին բեւեռացված է: Եթե իշխանությունը չլինի, պետք է Քոչարյանն ու իր արբանյակները լինեն, եթե Քոչարյանը չլինի, պետք է օրվա իշխանությունը լինի: Այ, հենց այս ձեւով 2021 թվականի հունիսին հայ ժողովուրդը գնաց ընտրության, այն դեպքում, երբ 25 քաղաքական ուժ էր մասնակցում ընտրություններին: Որպեսզի նորից նույն բանը տեղի չունենա, պետք է ստեղծել նոր այլընտրանք: Ես իմ հերթին եմ դա ասել, Գուրգեն Սիմոնյանը՝ իր հերթին, հետո արդեն միասնական ձեւով հայտարարել ենք, որ չենք միանալու ո՛չ իշխանությունների, ո՛չ էլ նախկին իշխանությունների հետ: Եթե կունենանք մեծամասնություն, մեր նպատակը ԵՄ անդամակցության հայտ ներկայացնելն է, դրանով են պայմանավորված նաեւ անվտանգությանը վերաբերող հարցերը: ԵՄ-ն այժմ որոնումների մեջ է: Դիմելով ԵՄ-ին, ավտոմատ կերպով ձեռք ենք բերելու պայմանավորվածություն՝ անվտանգային հարցերի վերաբերյալ: Թե որքանով են դրանք Հայաստանի համար կարեւոր, կարծում եմ՝ իմաստ չունի երկար խոսել: Իսկ եթե մեծամասնություն չունենանք, խորհրդարանական լծակները կօգտագործենք՝ այդ գիծն առաջ տանելու համար: Հանրաքվեի պես մի ինչ-որ պրոցես կկազմակերպենք, որ ով հաղթեց, ԵՄ-ին անդամակցելու պրոցեսը պետք է նախաձեռնի:

- Բայց նման պրոցես արդեն տեղի է ունեցել՝ զրո արդյունք:

- Այո, մի անգամ նման պրոցես տեղի է ունեցել, բայց դա ավարտվեց նրանով, որ ԱԺ-ն բացառապես մի հայտարարություն ընդունեց, ու վերջ: Ո՛չ պայմանավորվածություն, ո՛չ ժամկետներ, ոչ մի առանցքային քայլ: Իշխանությունն էլ ասում է՝ դեռ պետք է այդ գծին հասնենք, նոր որոշենք՝ ինչ անել, սակայն ԵԱՏՄ-ի հետ դժվար էլ կարողանան այդ հարցը լուծել, այնպես որ, մենք կլուծենք այդ հարցերը: Հայաստանի ապագայի հետ կապված մենք տեսնում ենք, թե ինչ է կատարվում: ԱՄՆ-ին համարում ենք գործընկերներ, բայց միայն՝ տնտեսական առումով, սակայն անվտանգության հետ կապված հարցերը լուծված չեն, որեւէ պայմանավորվածության մեջ չկա անվտանգային կոմպոնենտ: Եթե նման բան լիներ, ապա ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ռուս լրագրողին հարցազրույց տալու ժամանակ չէր հայտարարի, որ եթե 102-րդ բազան հանենք Հայաստանից, ինչ պետք է լինի, եթե մեզ վրա հարձակվեն: Հետո խոսեց ՆԱՏՕ-ի մասին այդպես անհարգալից, իսկ ՆԱՏՕ-ն ԱՄՆ-ն է: Նախ, սկզբում հայտարարում են, որ ԱՄՆ-ն մեր անվտանգությունը երաշխավորել է 99 տարով, օրեր անց պնդում են, որ բացի հայտարարություններից, ՆԱՏՕ-ն ոչինչ չի անելու, եթե հարձակում տեղի ունենա, ուստի շարունակելու ենք ապավինել ռուսական ռազմական ուժին: Ավելի աբսուրդ բան պատկերացնելը դժվար է: Այդ հայտարարությամբ իշխանությունները խոստովանեցին, որ ԱՄՆ-ից որեւէ անվտանգության երաշխիք չեն ստացել, հաշվի առնելով Իրանի կարգավիճակը, դժգոհությունը Թրիփի հետ կապված: Ստացվում է, որ մենք ունենք մեկ տարբերակ. որպեսզի ոչ մի չինովնիկից կախված չլինենք, պետք է դառնանք եվրոպական ընտանիքի անդամ: ԵՄ-ին անդամակցությունը կախվածության մեջ չի գցի մեզ անհատներից, այլ հակառակը՝ ամեն բան կլինի համակարգային: Իրանի հետ կապված չեզոքություն պահելն արդեն իսկ բարդ է դառնում մեզ համար:

- Իսկ ի՞նչ կարծիքի եք ներքաղաքական իրավիճակի, օրինակ՝ եկեղեցի-իշխանություն հարաբերությունների, Փաշինյանի «պատարագների» մասին եւ այլն: Որպես քաղաքական ուժ, ի՞նչ եք կարծում՝ ո՞րն է այդ ամենի նպատակը:

- Եկեղեցու հետ կապված իմ տեսակետը դեռ տարիներ առաջ եմ հայտնել: Հայաստանը ԽՍՀՄ-ից հետո ուներ Եկեղեցու հետ նորմալ ճանապարհ անցնելու շանս, հասարակությունը կարող էր ավելի մոտ լինել Եկեղեցուն եւ Աստծուն, սակայն Լեւոն Տեր-Պետրոսյանն ասաց, որ պետք է կաթողիկոս նշանակենք, եւ այդպես էլ եղավ: Նա նշանակեց Գարեգին Առաջինին, թեպետ նա մտավորական մարդ էր, խելացի էր ու պատկառելի, սակայն այդպես էլ իր նպատակին չծառայեց: Այն, որ մեր ժողովուրդն այսքան նյութապաշտ է, կարծում եմ՝ պատահական չէ: Հետո Տեր-Պետրոսյանին փոխարինեց այլ մեկը, որը Գարեգին Բ-ին կարգեց կաթողիկոս, ու մենք փաստացի այդ շրջափուլից դուրս չենք գալիս: Նիկոլ Փաշինյանը չի ցանկանում խնդիր լուծել, նա էլ իր համար է փորձում կաթողիկոս ընտրել: Եթե հանրության շրջանում այսօր հարցում անցկացնենք, ապա ամենակոռումպացված հոգեւորականը Կճոյանն է՝ մարդ, որը ներգրավված է օֆշորային սկանդալների մեջ, թանկարժեք մեքենաներ եւ այլն, ու բոլորս լավ գիտենք, թե նախկին իշխանությունների ժամանակ ինչ հարցեր էին լուծում: Պետության մաս էին, փաստացի, պաշտոնների էին նշանակում մարդկանց, բիզնես հարցեր էին լուծում: Այսօր փոխանակ այդ ամենից փորձենք մաքրվել, Կճոյանի եւ մի քանիսի հետ փորձում են Եկեղեցին «բարեկորոգել»: Հովհաննես Թումանյանն այնքան մեծ հեղինակություն ուներ, որ գնում էր տարբեր ազգերի ներկայացուցիչներին հաշտեցնելու: Մեզանում այժմ չկա այդ տեսակ մտավորական, եկեղեցականներն էլ, փաստացի, չեն կարողանում այդ ֆունկցիան կատարել: Քանի՞ նման մտավորական ունենք, որ կկանգնի մարդկանց մեջտեղում ու առանց քաղաքական ամբիցիաների կկարողանա հարցեր լուծել: Եթե մեր եկեղեցականները մասնակցում են քաղաքական ակցիաների, հայտարարություններ են անում, դա արդեն լավ նախադեպ չէ: Գարեգին Երկրորդն այս տարիների ընթացքում քանի՞ ներպետական խնդրի մասին է խոսել, որ ասենք՝ նա մտահոգ է, ու չնայած Եկեղեցին պետությունից անջատ է, սակայն նա խոսում է այդ հարցերի մասին, եւ այստեղ հարցն այն չէ, որ իշխանությունները լավն են, ոչ, բնավ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ 1,5 ՏԱՐՈՎ ԵՐԿԱՐԱՁԳԵԼ ԵՆ

Կառավարությունը հարկային խիստ վարչարարություն կիրառելով, հարկերն ու տուրքերը բարձրացնելով, արտերկրից նոր վարկեր վերցնելով՝ ձեւավորում է պետական բյուջեն, որտեղից էլ համայնքապետարանների հետ որոշակի համամասնությամբ՝ ֆինանսավորում են համայնքներում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը: Սակայն տարբեր ուղղվածության սուբվենցիոն ծրագրերի մի զգալի մասը տարիներով ձգձգվում է՝ անհանգստություն պատճառելով այդ համայնքների բնակիչներին, բայց ոչ՝ համայնքային եւ պետական բարձր պաշտոնյաներին:

Նախկինում գրել ենք Դիլիջանի Գետափնյա փողոցի, մայթերի կառուցապատման գրեթե 900 միլիոն դրամ արժեքով սուբվենցիոն ծրագրի իրականացման խախտումների մասին: Այդ ծրագրով նախատեսված շատ աշխատանքներ չեն իրականացվել, կատարված գործերն էլ նախագծից մեծ շեղումներով են արվել: Ծրագրի իրականացումից առաջ Դիլիջանի համայնքապետարանը պարտավոր էր այդ ծրագրի տվյալներով տեղեկատվական վահանակ տեղադրել այդ փողոցում, չի արել: Հունվարի 29-ին տեղեկատվական հարցում եմ ուղարկել Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին. «Որքա՞ն է Դիլիջանի Գետափնյա փողոցի կառուցապատման, ասֆալտապատման, փողոցի հարակից մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքը, ե՞րբ է ծրագրի սկիզբը, ե՞րբ է այն ավարտվելու, նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ որքա՞ն տարբերություններ կան»:

Համայնքի ղեկավարը մինչ օրս չի պատասխանել մեր հարցմանը: Անձնական գործում իր սեռի վերաբերյալ «արու» գրած, ՔՊ-ական Դավիթ Սարգսյանը նախկինում էլ չի պատասխանել մեր տեղեկատվական հարցումներին՝ երեւի իրեն բարձր դասելով օրենքից: Գուցե չի պատասխանել նաեւ այն պատճառով, որովհետեւ իր պատասխանով պետք է ակամա ընդուներ, որ Գետափնյա փողոցի ծրագիրը մեծ խախտումներով է իրականացվում, դրա ուշացման մեջ կա ծրագրի պատվիրատու Դիլիջանի համայնքապետարանի, նաեւ իր՝ համայնքի ղեկավարի մեղքը:

Փետրվարի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Տավուշի մարզպետի աշխատակազմում հաճախ եք քննարկում մարզում սուբվենցիոն ծրագրերի ընթացքը, ժամկետները: Դիլիջան համայնքի ղեկավար Դ. Սարգսյանին հունվարի 29-ին տեղեկատվական հարցում եմ արել. «Որքա՞ն է Դիլիջանի Գետափնյա փողոցի կառուցապատման, ասֆալտապատման, փողոցի հարակից մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքը, ե՞րբ է ծրագրի սկիզբը, ե՞րբ է այն ավարտվելու, նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ որքա՞ն տարբերություններ կան»: Համայնքապետը, խախտելով ՀՀ սահմանադրությունը եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, չի պատասխանել հարցմանս: Խնդրում եմ, որ Դուք պատասխանեք այդ հարցերին»:

Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի ասֆալտապատում եւ մայթերի վերանորոգում սուբվենցիոն ծրագիրը ՀՀ համայնքների տնտեսական եւ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել այն պայմանով, որ նախատեսված աշխատանքների 50 տոկոսի մեկնարկը կտրվի 2024 թվականին, մյուս 50 տոկոսինը՝ 2025 թվականին: ՀՀ կառավարության 12.02.2026 թ. թիվ 142-Ա որոշման համաձայն՝ նշված ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2027թ. հունիսի 30-ը»: Մարզպետը չի պատասխանել այն հարցերիս, թե որքան է Դիլիջանի Գետափնյա փողոցի ասֆալտապատման, մայթերի բարեկարգման սուբվենցիոն ծրագրի արժեքը, երբ է մեկնարկել այն, նախագծի եւ կատարված աշխատանքների միջեւ ինչ տարբերություններ կան: Կարող եմ ենթադրել, որ «Հրապարակ» օրաթերթում այդ ծրագրի վերաբերյալ քննադատական հոդվածից հետո ծրագրի վերաբերյալ քննարկում է եղել, կառավարությունում որոշել են եւս 1,5 տարով երկարաձգել նախագծային մեծ շեղումներով իրականացված, ձգձգված ծրագրի ժամկետը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԵԹԵ ՎԵՐԸՆՏՐՎԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԳՆԱՄ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԱՐՄԻՐ ԳԱՂՈՒԹԻ Է ՆՄԱՆՎԵԼ

ՓՄՁ

Վերջին 1-2 տարում հարկային պարտականությունների ավելացումները բերել են նրան, որ փոքր բիզնեսը սնանկանում է, մեծ թվով ձեռնարկություններ են փակվում: Եկամտային հարկի բեռի կտրուկ բարձրացումը, շրջանառության հարկի կրկնակի բարձրացումը, միկրոձեռնարկությունների սպեցիֆիկ տեսակները (փաստաբան, նոտար, իրավաբան եւ այլն) հարկման ընդհանուր դաշտ տեղափոխելը բերում է նրան, որ փոքրերը վերանում են:

2025 թվականից ուժի մեջ մտած հարկային փոփոխություններից հետո Հայաստանում շեշտակի նվազեց փոքր ձեռնարկությունների քանակը: Վիճակագրության կոմիտեի տվյալներով, 2025 թվականի վերջին ունեցել ենք մոտ 53 հազար այդպիսի ընկերություն, մինչդեռ 2024 թվականի վերջին դրանց թիվը 5,5 հազարով ավելի է եղել եւ, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով, կազմել է 59 հազար: Չի բացառվում, որ փակվածների իրական թիվն ավելի մեծ է, քանի որ, ինչպես հայտնի է, Հայաստանում բիզնես բացելը հեշտ է, իսկ փակելը՝ դժվար, բազմաթիվ ստուգումներ են պահանջվում, հարկային պարտքերի բացակայություն, եւ արդյունքում բազմաթիվ ընկերություններ գոյություն ունեն թղթի վրա, բայց իրականում չեն գործում:

Տնտեսագիտության թեկնածու Հայկ Ֆարմանյանն օրերս անդրադարձել էր այդ թեմային, հրապարակելով թվեր. 2025-ի հունվարի 1-ից, ՊԵԿ-ի տվյալներով, 3500-3600 տնտեսվարող սուբյեկտ է փակվել, եւ 10 հազար մարդ կորցրել է աշխատանքը: ՊԵԿ-ը շտապեց հերքել այդ տեղեկությունները. «2025 թվականին ակտիվ հարկ վճարողների քանակը բացարձակ թվով ավելացել 5,247-ով, այդ թվում՝ փոքր հարկ վճարողների քանակն ավելացել է 4,928-ով, հետեւաբար, Հայկ Ֆարմանյանի կողմից հնչեցված «3500-3600 տնտեսվարող սուբյեկտի փակման» վերաբերյալ պնդումը բացարձակապես հիմնազուրկ է եւ հակասում է պաշտոնական վիճակագրական տվյալներին»:

Ինչ վիճակում են «փոքրերը», իրականում, ճիշտ է, որ ուղղակի մահանում են հարկային տեռորի տակ: Հարցի պատասխանը փորձեցինք ստանալ ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի ղեկավար **Հակոբ Ավագյանից**: Այս ասոցիացիան մոտ 250 անդամ ունի: Թե նրանց որ մասն է փակվել, նախագահը դեռ չգիտի: «Մարտի վերջին մեծ համագումար է լինելու, ու այդ ժամանակ կերեւա, թե ով է կենդանի, ով է արտագաղթել»,- ասում է նա: Բայց Ավագյանի ընդհանուր տպավորությունը բացասական է: «Նրանցից շատերը խնդիրներ ունեն, բայց պաշտոնական թվերը պետք է ստանանք ՊԵԿ-ից, իսկ վիճակոմիտեի մեթոդաբանությունը փոքր-ինչ այլ է, որպես ուղենիշային՝ այն լավն է, բայց եվրոպական ստանդարտներին է համապատասխանում, աշխատողների թվով են առաջնորդվում, ոչ թե տարեկան շրջանառությունն է հաշվառում»,- ասաց նա: Հակոբ Ավագյանը հարցում է արել ՊԵԿ եւ օրերս կստանա գրավոր պատասխան: Հարցին, թե իրենց հետ շփումներում ինչ խնդիրներ են նշում ասոցիացիայի անդամները, նա պատասխանեց. «Տարբեր: Անցյալ տարի որ միտինգ էին անում, հիմնական խնդիրը հարկային փոփոխություններն էին, հետո, հուլիսին հաշվապահներն ու իրավաբաններն էին միտինգ անում, որոնք ՓՄՁ կամ ՓՄՁ սպասարկողներ էին, ոսկու շուկան՝ իր պրոբլեմներով, տոնավաճառում աշխատողներն են դիմում»:

Դիմեցինք նաեւ գործարարներին: Փոքր ձեռնարկատեր Արման Մ.-ն երկար ժամանակ զբաղվել է արտաքին գովազդով, բայց հարկային «չարեփոխումներից» հետո՝ 2025 թվականի ապրիլին փակել է բիզնեսը: «Պատճառը բարձր հարկերն էին, ուղղակի չկարողացա աշխատել, փակվեցի»,- ասում է գործարարը: Հիմա նա չի կարողանում հստակ հաշվարկ մտաբերել, թե իր հասույթի որ մասն էր տալիս հարկայինին, բայց ասում է, որ այս իշխանության «հորինած օրենքները, բարձր հարկերը, տուգանքները խեղդել են բիզնեսը»: Մեր հարցին, թե ինչպես է բացատրում այն, որ շատ ձեռնարկություններ էլ բացվել են, նա պատասխանեց. «Ո՞վ է բացվել: Էն, որ ստվերում աշխատում էին, եկան հարկային դաշտ, արդեն երեւում են, դրանց նոր բացված են համարում»:

Նկարագրելով իր ֆինանսական «էվոլյուցիան», Արման Մ.-ն հիշում է, որ ներկայիս հարկերի պայմաններում կարողացավ աշխատել ընդամենը 5 ամիս: «Հետո ընկա պարտքերի տակ, հետո՝ վարկերի, հետո փակվեցի, հիմա էլ հարկադիրում եմ: Բայց դրանից առաջ ես էնքան լավ հաճախորդ եմ եղել բանկերում, որ իրենք էին վարկ առաջարկում, ես չէի ուզում»: Արման Մ.-ն եւ նրա ընտանիքը սպասում են ընտրությունների արդյունքներին: «Եթե վերընտրվի այս իշխանությունը, ես միանշանակ կգնամ երկրից: Էս պայմաններում անհնար է ուղղակի ապրել: Հայաստանը կարմիր գաղութի է նման: Ամենուր ոստիկաններ, ամենուր տուգանքներ, սպանություններ»,- ասում է արդեն նախկին գործարարը:

Տուրիզմով զբաղվող Գ. Գ.-ն էլ ասում է, որ դադարեցրել է իր բիզնեսը, բայց դե յուրե չի փակել. «Հիմա միայն արկածային տուրերով եմ զբաղված: Կարող եմ ասել, որ բիզնեսի վիճակը վատանում է, բայց հարցազրույց տալ չեմ ուզում»:

Փաստաբաններից մեկն էլ, որ ցանկացավ անանուն մնալ, ասաց, որ նախորդ տարի փաստաբանության մեջ նոր գործ չի վերցրել: «Որովհետեւ մյուս ծառայություններս էլ էին ավելացված արժեքի հարկի դաշտ անցնում, ու ձեռնտու չէր գրեթե 40 տոկոս հարկով աշխատելը: Առհասարակ, նորավարտ փաստաբանների համար շատ բարդ է լինելու ոլորտ մտնելը էս պայմաններում»:

Պետությունը չունի հստակ ռազմավարություն, որը բխում է փոքր բիզնեսի շահերից՝ վստահեցնում է տնտեսագետ **Թաթուլ Մանասերյանը**: «Ինձ հայտնի չեն փոքր բիզնեսի օրինակներ, որոնք աճել են եւ դարձել են միջին բիզնես, եւ հայտնի չէ մի դեպք, երբ միջին բիզնեսը, հաղթահարելով խնդիրները, դառնա խոշոր բիզնես: Բոլոր զարգացած պետություններն աջակցում են փոքր բիզնեսին, որովհետեւ հիմնական հարկ վճարողը ոչ թե խոշորն է, այլ՝ փոքրը, որը մեծ կումուլյատիվ էֆեկտ ունի»,- ասում է նա: Բայց մեր պետությունը չունի նման նպատակային քաղաքականություն:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՔՊ «ԱՆՀԱՋՈՂԱԿ» ՏՂԱՄԱՐԴԻԿ ԻՐԵՆՑ ՏԵՂԸ ԿԶԻՋԵՆ «ՀԱՋՈՂԱԿ» ԿԱՆԱՆՑ

Նախընտրական ցուցակը կազմելու նպատակով իրականացված ՔՊ ներկուսակցական ընտրություններից հետո իշխող թիմում հետընտրական «բազառները» չեն դադարում: Խնդիր է առաջացել նաեւ կանանց քվոտան պահպանելու հետ կապված:

Ընտրական օրենսգիրքը, հիշեցնենք, պարտադիր է համարում ցուցակում հակառակ սեռի 30 տոկոս ընդգրկվածությունը: Այսինքն, նախընտրական ցուցակում յուրաքանչյուր երրորդը պետք է լինի կին: Սա նշանակում է, որ օրեր առաջ ՔՊ ներկուսակցական ընտրությունների արդյունքում ձեւավորված նախնական ցուցակի առաջին 50-յակում պատգամավորության առնվազն 16 կին թեկնածու պետք է լինի, մինչդեռ ՔՊ կանանց թիվը 12-ն է: Սա էլ իր հերթին նշանակում է, որ 50-ից հետո հորիզոնականներում տեղ զբաղեցրած առնվազն 4 կին պետք է ցուցակում վեր բարձրանան եւ տեղ զբաղեցնեն առաջին 50-յակում, բնականաբար, նրանց իրենց տեղը պետք է զիջի 4 տղամարդ:

Մինչդեռ հայտնի է նաեւ, որ ՔՊ 1000-ից ավելի պատվիրակները նույն՝ գաղտնի ընտրակարգով պետք է մեկ անգամ էլ ընտրություն կատարեն առաջին 50-ի միջեւ, որպեսզի արդեն որոշեն անունների հերթականությունը: Ահա, այսպիսի խուճուճ համակարգ է մտածել Նիկոլ Փաշինյանը, որի ուղեղը բացառապես ներկուսակցական ինտրիգների եւ իր վաղօրոք մտածած սխեմաներն իրականացնելու ուղղությամբ է աշխատում: ՔՊ-ում որոշում ունեն, որ այդ ընտրությունները կանցկացնեն մարտի վերջերին, որից հետո արտահերթ համաժողովը օրենքի պահանջով կհաստատի նախընտրական ցուցակի առաջին 50 համարին, թեպետ օրենքն առաջին 30-ն է պարտադիր համարում, որ համագումարում հաստատվի:

Հիմա պետք է լուծեն իրենց իսկ ջանքերով առաջացած այս «բարդ» խնդիրը: Արդար մոտեցումը հուշում է, որ կանանց պարտադիր քվոտան պետք է լրացվեր ընտրությունների 2-րդ փուլից հետո, որովհետեւ վերջին հորիզոնականներում հայտնվածները 2-րդ փուլում գուցե բարելավեին իրենց արդյունքները՝ վեր բարձրանային, եթե, իհարկե, քվեարկությունն ընթանար ոչ թե 50 հոգու, այլ ամբողջ ցուցակի մասնակցությամբ: Սակայն մենք տեղեկացանք, որ թիմում որոշում է կայացվել, որ մինչեւ 2-րդ փուլը պետք է տեղի ունենան կանանց եւ տղամարդկանց «ռակիրովկաներ»: 50 հոգանոց ցուցակի վերջին 4 հորիզոնականներում տեղ զբաղեցնող «անհաջողակ» տղամարդիկ իրենց տեղը կզիջեն 50-ից ցածր տեղ զբաղեցրած մի քանի «հաջողակ» կանանց, որոնք օրենքի ուժով կգան առաջ: 50 «անհաջողակ» կուսակցականներն են Հայկ Ավագյանը, Արագածոտնի մարզպետ Սերգեյ Մովսիսյանը, ՔՊ-ական պատգամավոր Վաղարշակ Հակոբյանը, Սերգեյ Բագրատյանն ու Փաշինյանի քավոր Հայկ Ղալումյանը: Վերջին երկուսը հավասար ձայներ են հավաքել, ուստի որոշել են, որ նրանցից ոչ մեկին էլ դուրս չեն թողնի, եւ ցուցակը կլինի ոչ թե 50, այլ 51 հոգուց:

Իսկ հաջողակ կանանցից ցուցակի 50-ին կմիանան Լուսինե Բաղալյանը, Արփի Դավոյանը, ՔՊ վերահսկող հանձնաժողովի անդամ Արաքսյա Վարդանյանը, Արագածոտնի մարզպետի տեղակալ Միլադա Հովհաննիսյանը: Մեզ ասացին, սակայն, որ այս տարբերակն էլ դեռեւս վերջնական չէ՝ չի հաստատվել ՔՊ վարչության կողմից, եւ չի բացառվում, որ խմորումները շարունակվեն, ու վարչությունում որոշեն կանանց համալրումն իրականացնել 2-րդ փուլից հետո՝ առայժմ քվեարկելով եղած ցուցակի շրջանակներում:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ՎԱԽ ԿՍՏԵՂԾԻ, ՈՉ ԹԵ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

ՍՓՅՈՒՌՔ

Օրերս սփյուռքի 8 ազդեցիկ գործիչներ կոչ էին արել բոլոր հայերին՝ պաշտպանել Հայ առաքելական եկեղեցին: Նրանք բաց նամակով Հայաստանի կառավարությանը զգուշացրել էին, որ Եկեղեցին հալածելու պատճառով իշխանությունը վտանգում է՝ կտրել կապը սփյուռքի եւ համաշխարհային հանրության հետ: Ըստ նրանց՝ Եկեղեցու առաջնորդների վրա հետեւողական հարձակումները եւ կաթողիկոսի հարկադրական հեռացման սպառնալիքներն ուղղակի սպառնալիք են աշխարհի բոլոր հայերի համար: Նամակը ստորագրել էին հայ մեծահարուստներ Նուբար Աֆեյանը, Էնթոնի Բարսամյանը, Լորդ Արա Դարզին, Էրիկ Էսրայելյանը, Վաչե Մանուկյանը, Ջոզեֆ Ուղուրլյանը եւ Պերճ Սեդրակյանը:

Թեմայի շուրջ մի քանի հարց ուղղեցինք արգենտինահայ փաստաբան, Տուկումանի համալսարանի ցեղասպանության ուսումնասիրությունների պրոֆեսոր եւ Բուենոս Այրեսի Սենատի թեկնածու **Լուսիանա Մինասյանին**, որը զբաղվում է տուժած հայերի շահերի պաշտպանությամբ:

- Սփյուռքի հեղինակավոր 8 գործիչ բաց նամակով դիմել են ՀՀ կառավարությանն ու աշխարհասփյուռ հայությանը՝ հորդորելով դադարեցնել Հայ առաքելական եկեղեցու եւ Ամենայն հայոց կաթողիկոսի վրա շարունակական հարձակումները, եւ նշել, որ դա վտանգում է կտրել Հայաստանի կապը սփյուռքի եւ աշխարհի հետ:

- Սա Հայաստանի կառավարությանը հակադրվելու մասին չէ: Սա վերաբերում է Հայ առաքելական եկեղեցու պատմական դերի ճանաչմանը հայերի, հատկապես Օսմանյան կայսրությունից փախածների համար: Օսմանյան դարաշրջանում միլլեթ (ազգ՝ խմբ.) համակարգի ներքո Եկեղեցին ոչ միայն կրոնական հաստատություն էր, այլեւ ծառայում էր որպես համայնքային առաջնորդության եւ ինքնակառավարման կենտրոնական հենասյուն: Միլիոնավոր հայերի համար համայնքային շարունակականությունն ու գոյատեւումը կախված էին դրանից: Ահա թե ինչու այսօր սփյուռքում շատերն այդքան ուժեղ են արձագանքում, ովքեր ապրել են Օսմանյան միլլեթ համակարգի ներքո եւ հետագայում փախել ցեղասպանությունից եւ հալածանքներից: Ուզում եմ այս հարցին մոտենալ լրջությամբ ու զսպվածությամբ եւ խուսափել այն պետության եւ սփյուռքի միջեւ բախում ձեւակերպելուց: Սփյուռքում շատերը Եկեղեցու շուրջ լարվածությունը համարում են ոչ միայն քաղաքական վեճ: Լավագույն մոտեցումը երկխոսությունն է, փոխադարձ հարգանքը եւ խուսյթից կամ գործողություններից խուսափելը, որոնք խորացնում են բաժանումները Հայաստանի եւ արտերկրում ապրող հայերի միջեւ:

- Արդյոք ուշացած չէ՞ այս կոչը, չէ՞ որ փաշինյանական ռեժիմը վաղուց է փչացրել հարաբերությունները սփյուռքի հետ: Մի շարք ազդեցիկ գործիչների մուտքն են արգելել Հայաստան եւ այլն: Մինչդեռ իշխանության գալու առաջին 1-2 տարում Փաշինյանը հավաստիացնում էր, որ եկել է սփյուռքահայ գործիչների՝ ՀՀ-ում գործունեություն ծավալելու երրորդ փուլը՝ սոսկ բարեգործությունից անցում կատարելով էական դերակատարման:

- Վերջին տարիներին իշխանությունների եւ սփյուռքի մի մասի միջեւ հարաբերությունները լուրջ լարվածության են հասել, եւ անցյալի մի շարք իրադարձություններ կարող են խոր հիասթափություն եւ անվստահություն առաջացնել: Միեւնույն ժամանակ, կարեւոր է բոլոր իրավունքները՝ պաշտպանելու իր ինքնիշխանությունն ու անվտանգությունը: Այնուամենայնիվ, սփյուռքահայերը նույնպես ունեն բարոյական իրավունք՝ արտահայտելու մտահոգություն, հատկապես, երբ թեման վերաբերում է այն հաստատություններին, որոնք պատմականորեն պաշտպանել են հայի ինքնությունը, արժանապատվությունը եւ համայնքային գոյատեւումը միլիոնավոր մարդկանց համար:

- Փաշինյանը չի ուշացրել վերոնշյալ բաց նամակին արձագանքը՝ սպառնացել է հակազդեցության կոշտ գործողություններ ձեռնարկել իր քայլերը չողջունող սփյուռքահայ գործիչների դեմ՝ նրանց ներգրավվածությունը համարելով դավադիր եւ ՀՀ պետական անվտանգությանը սպառնացող ծրագիր: Իրավական առումով ինչ լծակներ կարող է բանեցնել վարչապետը եւ արդյոք նման բարոյական իրավունք ունի, ընդհանրապես:

- Իրավական առումով՝ վարչապետը կարող է օգտագործել պետական մեխանիզմներ, ինչպիսիք են սահմանային մուտքի սահմանափակումները, հետաքննությունները կամ հանրային մեղադրանքները, հատկապես, եթե դրանք ձեւակերպված են ազգային անվտանգության մտահոգությունների ներքո: Սակայն դրանք չափազանց զգայուն գործիքներ են, եւ դրանց լայնորեն օգտագործումը սփյուռքի գործիչների դեմ՝ պարզապես իր հետ չհամաձայնելու համար, վտանգում է խորացնել բեւեռացումը եւ ստեղծել վախ, այլ ոչ թե վստահություն: Բարոյական առումով պետությունն ունի արդար լինել. սփյուռքի նպատակը չպետք է լինի Հայաստանի կառավարության վրա հեռվից ճնշում գործադրելը, այլ պահպանել ազգային միասնությունը եւ հարգալից գործընկերությունը: Սփյուռքի շատ հաստատություններ այսօր ստիպված են լինում խոսել ոչ թե քաղաքական հավակնություններից ելնելով, այլ որովհետեւ վախենում են խորացող խզումից՝ այն ժամանակ, երբ Հայաստանը կարիք ունի համերաշխության եւ միասնության:

Արա ԱԼՈՅԱՆ

ԵՂԵ՞Լ Է ՄԻ ԴԵՊՔ, ԵՐԲ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՉՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՆ ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Հարցազրույց քաղաքագետ, գրականագետ **Անուշ Սեդրակյանի** հետ

- Վարչապետ Նիկոլ Փաշինյանը փետրվարի 19-ին Վաշինգտոնում մասնակցել է խաղաղության խորհրդի անդրանիկ նիստին: Ի դեպ, խաղաղության խորհրդի անդամ երկրները հիմնականում աֆրիկյան, լատինաամերիկյան մայրցամաքից են, այնտեղ չկան եվրոպական առաջադեմ պետություններ: Ինչ եք կարծում՝ ո՞րն է այս խորհրդի նպատակը, ինչո՞ւ է Փաշինյանը մասնակցում դրան:

- Այն ունի շատ տարբեր նպատակներ: Դոնալդ Թրամփն առաջ է քաշում խաղաղության աղավնու իր օրակարգը, իբրեւ թե ինքը զորավոր ուժով՝ ամենուր կոնֆլիկտներ հարթելու համար է եկել: Մենք տեսնում ենք, որ այնտեղ հիմնականում ներգրավված են աֆրիկյան երկրներ: Այժմ պայքարը գնում է աֆրիկյան եւ ասիական երկրների համար, որովհետեւ հենց վերջերս Մերշմայմերը՝ այդ հայտնի պրոռուսական եւ հակահրեական մեկնաբանը, խոսել էր այն մասին, որ այժմ վճռորոշ ձայն են ստանում՝ քաղաքական թատերաբեմում ասիական եւ աֆրիկյան երկրները եւ, բնականաբար, Թրամփը խնդիր է դրել հենց այդ երկրներին ցույց տալու, թե որքան կարեւոր են դրանք իր համար, ինչպես նաեւ՝ նա գիտի, որ տվյալ պետությունները չունեն ձեւավորված անկախ մշակութային եւ ժողովրդավարական համակարգ, խոչընդոտ չեն դառնալու իր համար: Կարճ ասած՝ Խաղաղության խորհուրդը դակիչ հանձնաժողովի նման մի բան է լինելու, որը հաստատելու է Թրամփի բոլոր որոշումները: Իսկ ինչ է անհրաժեշտ Նիկոլ Փաշինյանին. նրան անհրաժեշտ է, որ ՔՊ-ի առաջ քաշած ու խիստ խնդրահարույց խաղաղության օրակարգն առաջ քաշվի, քանզի այս աշխարհում կա պացիֆիզմ, երբ գտնվում ես բարվոք պայմաններում եւ ձգտում ես խաղաղության, ինչպես, օրինակ, ԱՄՆ-ն է, իսկ անգլիացիները դիֆիթիզմ են կոչում պարտվողականությունը, երբ խաղաղության օրակարգը պաշտպանում ես ամեն ինչ զիջելու, տալու եւ ամեն ինչի հետ համակերպվելու գնով, որովհետեւ այն ձեռնտու է քո իշխանությանը եւ քո ֆինանսական վիճակին, կարճ ասած՝ քո ամեն ինչին, սակայն ոչ պետությանը: Հայտնի դիֆիտիզմի օրինակ կարող ենք ներկայացնել բոլշեւիկներին, որոնք, գալով իշխանության, ահագին տարածքներ հանձնեցին, քանի որ այն Գերմանիայի թելադրանքն էր: Նրանք եւս խնդիր ունեին՝ իրենց իշխանությունը պահելու: Այժմ Նիկոլ Փաշինյանին ձեռնտու է, որ խաղաղության թեման դառնա միջազգային՝ դրսից բերված, որպեսզի բոլորը կարծեն, թե այս խաղաղությանը չկա այլընտրանք: Ինչու եմ ասում՝ «այս խաղաղությանը», որովհետեւ, ինչպես արդեն նշեցի, կա արժանապատիվ ու իրական խաղաղություն: Խաղաղության մեկ այլ տեսակ էլ նշեմ. ժողովուրդները երբեմն գիտակցում են, որ պետք է դադար վերցնեն, հանգստանան եւ նոր թափ հավաքեն հաղթանակի համար, սակայն Փաշինյանի տարբերակը լրիվ այլ է: Ստացվում է այնպես, որ հակադարձ ուժերի չձեւավորումը, օրակարգերի անընկալունակությունը բերում են նրան, որ կեղծ ու մանիպուլյատիվ թակարդներին որեւէ մեկը չի արձագանքում, չի վերլուծում.... Արդյունքում՝ շատերը հույսները կորցրել են, շատերն էլ թեւերը թափ տալով՝ անտարբերության են մատնվել, սակայն իրականում ես կարծում եմ, որ եթե համապատասխան աշխատանք տարվեր եվրոպական, ամերիկյան տարբեր շրջանակների հետ, այս խորհուրդը նման իրավիճակով առաջ չէր գնա:

- Իսկ ինչո՞ւ ԵՄ երկրները ներգրավված չեն այս խորհրդում:

- Նրանք հիմա խիստ զբաղված են, ունեն լուծելու որոշակի խնդիրներ: Ամերիկյան հովանավորչության դադարեցումից հետո Եվրոպան խնդրահարույց պրոբլեմների առաջ է կանգնել:

- Վերջերս էլ Հայաստանում ԱՄՆ փոխնախագահը հայտարարեց, որ աջակցում են Փաշինյանի իշխանության վերարտադրմանը: Ինչո՞ւ նա այդպիսի հայտարարություն արեց:

- Նա հայտարարեց, որ աջակցում է խաղաղությանը: Առհասարակ, ե՞րբ է եղել մի դեպք, երբ եվրոպական երկրները կամ ԱՄՆ-ն առերեւույթ չհամագործակցեն Հայաստանի իշխանությունների հետ՝ բոլոր ժամանակներում: Ուզում եմ հիշեցնել, որ խիստ պրոբլեմատիկ Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի ընտրությունների ժամանակ էլ դիտորդները, խոսելով որոշակի թերությունների մասին, այնուամենայնիվ ասել են, որ ընտրությունները չեն կեղծվել: Խոսքը բոլոր ընտրությունների մասին է: Դրսի ստրուկտուրաները հասկանում են, որ իրենց պլանները, ծրագրերն իրականացնելու համար պետք է աշխատեն գործող իշխանության հետ, քանի որ այն հեշտ ու նպատակահարմար է, մանավանդ, որ գործող իշխանությունները շատ ավելի ճկվող են, իհարկե, ձեռնտու են բոլորին: Ռուսաստանն էլ որեւէ հակադարձ խնդիր չունի օրվա իշխանությունների հետ: Խրախուսում է նրանց, ընդունում է ներկա օրակարգը: Նորմալ երկրները մտածում են իրենց շահերի մասին, թե ինչ կլինի Հայաստանի հետ, դա ոչ մեկին չի հետաքրքրում:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՍՖԱԼՏ

ԳԱՐՈՒՆ Ա, ՓՈՍ Ա ԱՐԵԼ . . .

Ձմռանը սովորաբար ձյուն է լինում: Այս պարզ ճշմարտությունը քաղաքային իշխանություններին միշտ անակնկալի է բերում: Նախ զարմանում են, որ ձյուն եղավ, շատ ձյուն, հետո ապշում են, որ ասֆալտի վրա փոս եղավ՝ շատ ու անհարմար փոսեր: Այդպես է եղել միշտ՝ ասֆալտի հայտնագործումից ի վեր: Բայց զարմանալին այն է, որ այդ ավանդույթն այդպիսին մնաց նաեւ ասֆալտը որպես կարեւոր նախընտրական գործոն օգտագործել հավակնող իշխանության դեպքում: Գարունը բացվեց, ու տեսանք փոսերը եւ լսեցինք բացատրությունը, թե ինչու այդքան շատ ու խորն են այս անգամ բոլորովին վերջերս հարթեցված եւ ասֆալտապատված ճանապարհների փոսերը:

Եվ այսպես, ինչպե՞ս է բացատրում խնդիրը քաղաքապետ Ավինյանը: Ասում է. «Փոսերը հիմնականում առաջացել են ձմեռային սեզոնի ընթացքում՝ բազմակի սառչել-հալվել ցիկլերի, ճանապարհային ծածկի մեջ ջրի ներթափանցման եւ ձյան դեմ կիրառված աղի ազդեցության հետեւանքով: Ջուրը սառչելիս ընդլայնվում է, թուլացնում է ասֆալտի կառուցվածքը, իսկ ծանր երթեւեկությունը վերջնականորեն քանդում է այդ հատվածները»:

Ընդհանրապես, այս քաղաքապետը, որն իր պաշտոնը ստանձնելիս երդվեց՝ ձեռքը դնելով Էրեբունի-Երեւանի հիմնադրման մ.թ.ա. 782 թվագրվող սեպագիր արձանագրության վրա՝ հատուկ բերված երդմնակալության համար, որպես խորհրդանշական կապ Երեւանի հնագույն պատմության հետ, կարծում է, թե երեւանցիների գիտելիքներն ուրարտական ժամանակներից առաջ չեն գնացել: Աղբն այրելու եւ օդի աղտոտվածության մասին խոսելիս եւս նա տվեց ժամանակակից մարդուն արդեն լավ հայտնի երեւույթների բացատրություններ՝ օդի կախված մասնիկների, Երեւանի ձագարային լանդշաֆտի եւ այլ հանրահայտ բաների մասին, որոնք, սակայն, չեն չեղարկում կամ բացառում քաղաքի գրագետ կառավարման՝ նույնպես ժամանակակից մեթոդները:

Ջրի սառչել-հալչելու մասին քաղաքապետի դիտարկումը կլիներ հետաքրքիր եւ անգամ կարեւոր, եթե նրանից մոտ 340 տարի առաջ Գիյոմ Ամոնտոնը կատարած չլիներ ջերմային ընդլայնման վերաբերյալ իր ուսումնասիրությունները, որը հրապարակել է 1690-ականներին եւ ապացուցել, որ ջերմաստիճանի բարձրացման դեպքում գազի ծավալը մեծանում է, իսկ նվազման դեպքում՝ փոքրանում: Իսկ կոնկրետ ձյան, այսինքն՝ ջրի, դեպքն էլ բացատրել է Անդերս Ցելսիուսը, որի ջերմաստիճանային ուսումնասիրությունները եւ հենց իր՝ Ցելսիուսի սանդղակը, հրապարակվել են 1742 թվականին, այսինքն՝ մոտավորապես 280 տարի առաջ:

2026 թվականին այսպիսի հին հայտնագործություններ ու դպրոցական ֆիզիկայի 5-րդ դասարանի գիտելիքներ ցուցադրելու փոխարեն, երեւի ուղղակի պետք է նայել այդ ասֆալտի որակին, որը չպետք է չդիմանա մեկ ձմեռային փորձության: Եվ, ուրեմն, այս ասֆալտները, որոնք ներկա իշխանությունը դարձրել է խաղաքարտ՝ ընտրությունների համար, մնայուն արժեք չեն՝ գոնե մի քանի տարվա կտրվածքով, քանի որ չունեն անհրաժեշտ նվազագույն որակը՝ ջրի ընդարձակման եւ սեղմման սովորական ֆիզիկական ազդեցությունների հետեւանքով շարքից դուրս չգալու համար:

Մեր օգնական ChatGPT-ն կօգնի նաեւ ձեզ, պարոնայք՝ դպրոցում դասերը վատ սովորած պաշտոնյաներ. պարզվում է՝ չնայած նյութերի ջերմաստիճանային անկայուն վարքագծին, կա հնարավորություն՝ մեկ ձմեռվա ընթացքում համայնքի եւ պետության բյուջեի փողերը խոր փոսերի մեջ չթաղելու: Եվ, ահա, ասֆալտը համարվում է որակյալ, երբ այն բավարարում է թե՛ նյութական, թե՛ կառուցվածքային պահանջներին, որոնց հիմնական պայմաններն են. ասֆալտի ճիշտ բաղադրությունը՝ բիտումի ճիշտ տոկոսը: Այն չպետք է լինի ոչ շատ, ոչ քիչ, ոչ էլ աչքաչափով, քանզի քիչ լինելու դեպքում ճանապարհը կճաքի, շատ լինելու դեպքում կդառնա փափուկ եւ կձեւափոխվի: Բիտումի նկատմամբ պետք է ճիշտ հարաբերակցություն ունենան լցանյութերը՝ ավազ, խիճ, քար: Բիտումի որակը չանտեսենք. այս հարցում փոսերը լվանալու թվացող հեշտությունը շատ կարճատեւ գաղտնիք է, պարոնայք ասֆալտչիկներ: Բիտումը պետք է ունենա լավ կպչունություն, դիմանա ջերմաստիճանային փոփոխություններին, չփխրվի ցրտին եւ չփափկի չափազանց շոգին: Կարեւոր են այս նյութերի ճիշտ խառնման եւ տեղադրման պայմանները. խառնուրդի ջերմաստիճանը՝ 140-170°C, պետք է իրականացվի լավ խտացում (ճանապարհային գլանով)՝ միայն հարթ եւ ամուր հիմքի (հողի կամ բետոնի) վրա:

Ու շատ կարեւոր դիտարկում, հին նորություններ հայտնագործող պարոնայք, ասֆալտը պետք չէ փռել անձրեւի ժամանակ, դա հիմարություն է: Ահա, այս պայմանները պահպանելու դեպքում ասֆալտն ունենում է մեխանիկական հատկություններ, դրանք են՝ ծանր բեռների, արագ ճաքերի եւ փոսերի նկատմամբ նույնպես դիմացկունություն եւ, ամենակարեւորը՝ ջրադիմացկունություն: Ճիշտ փռված ասֆալտի մեջ ջուրը հեշտությամբ չի ներծծվում, եւ, հետեւաբար, այն կայուն է սառչել-հալվելու ցիկլերի ընթացքում: Կարճ ասած՝ ասֆալտը որակյալ է, երբ այն դիմացկուն է, հարթ, ճաքեր չի տալիս եւ երկար ժամանակ պահպանում է իր ձեւը՝ անկախ նրանից, որ տարին ունի 4 եղանակ, եւ այդ ընթացքում պատահում են դեպքեր, երբ ջուրը սառչում է, իսկ հետո, մի գեղեցիկ օր անխուսափելիորեն հալչում է: Սրանք ֆիզիկաքիմիական ճշմարտություններ են, բայց ասֆալտին սազում են նաեւ քաղաքական գնահատականներ, քանի որ այն քաղաքական նշանակություն ունի՝ որպես ընտրություններում կարեւոր գործոն:

Ասֆալտը եւ ճանապարհաշինությունը որակյալ են, երբ այն իրականացրել են ազնիվ ղեկավարները՝ գրագետ եւ ազնիվ կապալառուների միջոցով: Երբ շինարարության տենդերը շահել են պրոֆեսիոնալ ընկերությունները, ոչ թե պաշտոնյաների ընկեր-բարեկամները, երբ գնվել է որակյալ բիտում, վարձվել են որակյալ մասնագետներ եւ չեն կատարել հին ու բարի, այսպես ասած, ատկատներ՝ մտածելով, որ ասֆալտի շերտի ուսումնասիրության բարդությունը թույլ չի տալիս հստակ գնահատել աշխատանքի արժեքը: Եթե մեկ տարում ասֆալտը փլուզվել է եւ ահռելի փոսերով անհարմարություն առաջացրել մայրաքաղաքի կենտրոնում, շատ կասկածելի է, որ ավելի որակյալ ասֆալտ փռված լինի գյուղերում, որտեղ մարդիկ հիացած են ափիբերան՝ «նախկինները գյուղերում թերացել են՝ ասֆալտ չեն արել, իսկ ներկաներն արել են» մտքից:

Եվ հիմա հանկարծ հիշել են, թե ձմռան փորձությանը չդիմացան հենց նախկինների ասֆալտները: Ուղղակի մոռանում են, որ իրենք իշխանության են արդեն 8 տարի, եւ, ուրեմն, այդ նախկինները, որ, փաստորեն, այդուամենայնիվ, ինչ-որ ասֆալտ արել են, լավ էլ որակով են արել: Ընդդիմադիր պատգամավորը, խոսելով Երեւանի խայտառակ ճանապարհային փոսերի մասին, ասաց՝ միլիարդավոր դրամները, որ ծախսվել են հարկատուների գրպանից, ասֆալտ անելու համար, մխվել են: Չի պահպանվել ո՛չ որակը, ո՛չ հաստությունը, ո՛չ մեթոդը: Չհամաձայնել այս դիտարկումների հետ՝ դժվար է: «Ձեր արած ասֆալտն ասֆալտ չի: Աշխարհի ոչ մի երկրում աղ շաղ տալուց խրամատներ չեն առաջանում»,- եզրահանգեց պատգամավորը, եւ դա, այո, լիովին քաղաքական գնահատական է:

Շաքե ԱՎՈՅԱՆ

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ, ԼՈՍԻ ՔԻՍՈ, ՏԻԳՐԱՆ ԱՐԶԱՔԱՆՑՅԱՆ... ՄՏՔԻ «ԳԻԳԱՆՏՆԵՐԸ»

Սպարապետ Վազգեն Սարգսյանի եղբայրը՝ նախկին վարչապետ Արամ Սարգսյանը, հատկապես ակտիվորեն սկսեց քաղաքականությամբ զբաղվել 2018-ից հետո, չնայած 2018-ի իշխանափոխության օրերին Նիկոլ Փաշինյանի կողքին չէր եւ հայտնվեց, երբ նա արդեն վարչապետ դարձավ: Ընդդիմադիրի քողի տակ մտած Արամ Զավենիչը 2018-ից հետո վերածվել է ՔՊ-ի բացահայտ կցորդի: Բայց Երեւանի ավագանու 2023-ի ընտրություններից հետո նրա ղեկավարած «Հանրապետություն» կուսակցությունը բացահայտորեն ՔՊ-ին պաշտպանեց եւ իշխանության փայատեր դարձավ՝ համայնքապետեր, քաղաքապետի տեղակալ եւ այլ պաշտոններ զբաղեցնելով: Մի բան լավ էր՝ մարդիկ հասկացան, որ Արամ Սարգսյանն ընդդիմադիր չէ: Եվ դա իր դերը խաղաց Գյումրու եւ Վաղարշապատի ՏԻՄ ընտրություններում, որտեղ «Հանրապետությունը» չկարողացավ հաղթահարել անցողիկ շեմը: Արամ Սարգսյանի հակասական ուղու եւ կերպարի մասին կարելի է հատորներ գրել, սակայն ուզում ենք ներկայացնել նրա մտքի ընդամենը մի քանի «գոհար», որոնք փաստում են, որ նա քաղաքականության հետ այնքան կապ ունի, որքան, ասենք, Նիկոլ Փաշինյանը՝ ռազմական գործի:

Ահա Արամ Զավենիչի մտքի փայլատակումներից մի քանիսը.

«Մենք էլ Ալիեւին կգողանանք, եթե Ադրբեջանը գողանա Արայիկ Հարությունյանին»,- 2022 թվականին 24TV-ին տված հարցազրույցում ասել էր Արամ Սարգսյանը՝ նկատի ունենալով Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանին: «Եթե Սերժ Սարգսյանը 2026թ. ընտրություններին դնի իր թեկնածությունը, Ռոբերտ Քոչարյանից ավելի շատ ձայն կհավաքի, Քոչարյանն ո՞վ էր, որ ժամանակին իշխանությունը չտար Սերժ Սարգսյանին». սա էլ ասել է 2025 թվականին: Յ1-ին տված հարցազրույցներից, ավելի ճիշտ՝ մենախոսություններից մեկում նա, խոսելով իր՝ վարչապետ եղած ժամանակվա անարդյունք կառավարման մասին, որպես արդարացում, իրեն համեմատել է հղի կնոջ հետ. «Երեխայի ծնվելուն 9 ամիս է պետք, ես 6 ամիս եմ պաշտոնավարել»: Ասել է 2025 թվականին:

Զավենիչը սխալ՝ չիրականացող կանխատեսումների մեծ վարպետ է: Նա 2015 թվականին «Իրատես» թերթին տված հարցազրույցում ասել է, որ Ռոբերտ Քոչարյանը շուտով դառնալու է երիտասարդ թոշակառու, իսկ ԱՄՆ նախագահական վերջին ընտրություններից առաջ պնդել է, որ Քամալա Հարիսն արդեն իսկ հաղթել է Թրամփին, այնինչ, ինչպես տեսանք, ընտրություններում հաղթեց հանրապետական Դոնալդ Թրամփը: Իրեն հայրենասեր հռչակած, բայց հակահայ խոսույթ տարածող այս անձի հարցազրույցները լսելու կամ ընթերցելու համար պողպատե նյարդեր են պահանջվում, հիմա նա չի խորշում անգամ զազրախոսել Բաքվի բանտերում խոշտանգվող հայ ռազմագերիների մասին: Նման փայլուն «կանխատեսումներ» անելուց զատ, Արամ Զավենիչը նաեւ կես դրույքով «հաշվապահ» է աշխատում ու զրպարտում այլ քաղաքական ուժերի: Նա օրեր առաջ խոսելով Սամվել Կարապետյանի մասին՝ պնդել է. «Սամվել Կարապետյանն ամսական 15-20 հազար դոլար է ծախսում՝ մարդկանց մոբիլիզացնելու համար»: Եթե Ռ. Քոչարյանի եւ ռուսների հանդեպ ատելությունը բացատրում է նրանով, որ նրանք են կանգնած հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետեւում, ապա առնվազն հասկանալի չէ, թե ինչու է այդքան ատում Սամվել Կարապետյանին, որն իր երկրի համար միայն լավ բաներ է արել՝ բարեգործություն, ներդրումներ: Թերեւս, պատճառը կրկին Ռուսաստանն է: Նա օրեր առաջ ասել է. «Եթե Կարապետյանը Պուտինի ասածը չանի, կպատժվի: ԱՄՆ-ն Սամվել Կարապետյանին համարում է Պուտինի հետ փողեր լվացող անձ»: Բայց այս «մտքի գիգանտը», բնականաբար, հանգիստ է վերաբերվում Արցախը հանձնելուն, պետբյուջեից միլիարդավոր դրամների պարգեւավճարներին, քաղաքական հալածանքներին եւ անգամ Հայ առաքելական եկեղեցու դեմ հետապնդումներին, թեեւ շատ սերտ հարաբերություններ է ունեցել Գարեգին Բ-ի հետ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՇԽԱՐՀ

2026 թվականին Երեւանի առաջ ծառացած կլինի երեք հիմնական խնդիր՝ հարաբերությունների զարգացում ռեգիոնալ հարեւանների հետ՝ Ադրբեջան եւ Թուրքիա, հարաբերությունների էվոլյուցիա արտառեգիոնալ ուժային կենտրոնների հետ, նախեւառաջ՝ ԵՄ-ի եւ Ռուսաստանի, ինչպես նաեւ՝ ներքաղաքական լարվածություն, որը կապված է կայանալիք խորհրդարանական ընտրությունների հետ՝ գրում է Պաոլո Պերոլոն eastjournal-ում:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ 2026-ԻՆ. EASTJOURNAL

Անցյալ տարվա օգոստոսին ստորագրված վաշինգտոնյան հռչակագրի իրականացումը կախված է ավելի շատ Բաքվից, քան՝ Երեւանից: Հայաստանի կառավարությունն իր կողմից անում է ամեն հնարավորը, որպեսզի նպաստի Ադրբեջանի հետ խաղաղությանը եւ Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացմանը: Ռիսկն այն է, որ երկիրը կարող է հայտնվել մշտական լարվածության վիճակում, հատկապես՝ մի իրավիճակում, երբ աշխարհում սկսել է գործել միայն մեկ կանոն՝ ուժի կանոնը: Փաշինյանը դա հասկանում է, եւ խնդիրն այն է, որ դա հասկանում է նաեւ Ալիեւը: Ադրբեջանի նախագահը շարունակում է Թրամփի ուղին անվանել զանգեզուրյան միջանցք, որը ենթադրում է հայկական տարածքի նկատմամբ ադրբեջանական ինքնիշխանության ընդլայնում՝ հանուն Նախիջեւանի ինքնավարության՝ Ադրբեջանի հիմնական տարածքի հետ կապակցման: Բացի այդ, Ադրբեջանն ավելի ու ավելի է մեծացնում իր ռազմական բյուջեն եւ հանդես է գալիս հայ-թուրքական սահմանի բացման դեմ՝ նախքան խաղաղության պայմանագրի ստորագրումը: Սակայն, ըստ Բաքվի, այդ պայմանագրի ստորագրման համար նախապայման պետք է լինի Հայաստանում սահմանադրական բարեփոխումների իրականացումը, ինչը կարճաժամկետ հեռանկարում անհնար է: Ադրբեջանական կողմը պահանջում է Սահմանադրության նախաբանի փոփոխություն, որը սովորաբար չի կարող փոփոխվել սովորական ընթացակարգով եւ պահանջում է նոր սահմանադրության ընդունում: Օրինաչափ հարց է առաջանում. իսկ իրո՞ք Ադրբեջանը հետաքրքրված է խաղաղությամբ, հատկապես որ Ալիեւը մշտապես հայտարարում է, թե Հայաստանը պատմական ադրբեջանական տարածք է, ինչն ինքնին վկայում է հակառակի մասին: Երկրորդ կարեւոր ուղղությունն արտաքին ուժային կենտրոնների հետ հարաբերություններն են: 26 թվականի մայիսին Հայաստանն առաջին անգամ պատմության մեջ կիյուրընկալի Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովը եւ Հայաստան-Եվրամիություն գագաթնաժողովը: Սա նշանակալի իրադարձություն է: Երեւանը դառնալու է Եվրոպայի ապագայի մասին քննարկումների կենտրոն, որին մասնակցելու է եվրոպացի 44 առաջնորդ: Դա վկայում է այն մասին, որ Հայաստանը սկսում է նախաձեռնողականություն ցուցաբերել Եվրոպայի հետ հարաբերություններում, սակայն դեռ պարզ չէ, թե դա ինչի է հանգեցնելու: Որոշ հայ պաշտոնյաներ ակնհայտորեն խոսում են այն մասին, որ Հայաստանը պետք է անդամակցի Եվրամիությանը, սակայն պաշտոնապես անդամակցության հայտ չի ներկայացվել: Զուգահեռաբար, Երեւանը մտադիր չէ հրաժարվել Եվրասիական տնտեսական միությունից, իսկ անցյալ տարվա հուլիսին հայտ է ներկայացրել՝ անդամակցելու Շանհայի համագործակցության կազմակերպությանը: Այդ կազմակերպությանն անդամակցության հարցում որոշում են կայացնում Պեկինն ու Մոսկվան: Այսպիսով, Հայաստանը փորձում է իրականացնել պրագմատիկ եւ բալանսավորված արտաքին քաղաքականություն: Ունենալով 2008-ի Վրաստանի փորձը՝ հասկանալի է, որ իմաստ չկա ուղղակի առճակատման մեջ մտնել Ռուսաստանի հետ, որը կայսրապետական տրամաբանությամբ Հարավային Կովկասը դիտարկում է իր առանձնահատուկ շահերի գոտին: Հասկանալի է, որ ավելի լավ է դրանից խուսափել: Կարեւոր սկզբունք է մնում դիվերսիֆիկացիան, սակայն ոչ Մոսկվայի բացառմամբ, որը պետք է պահպանվի որպես նշանակալի քաղաքական, տնտեսական եւ ռազմական գործընկեր:

Սա չի նշանակում, իհարկե, թե Հայաստանի իշխանությունները վստահում են Ռուսաստանին: Հայաստանի կառավարությունը դիմել է Բրյուսելին՝ խնդրելով ամրապնդել երկրի կիբերանվտանգությունը եւ արտաքին ազդեցությունների հակազդման համակարգերը՝ հունիսին կայանալիք պառլամենտական ընտրությունների շեմին: Այս ամենը շատ բանով կախված է նրանից, թե ինչ արդյունքներ են լինելու հունիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններում: Արտաքին քաղաքականության ոլորտում վարչապետի դիրքերը՝ քաղաքական ընդդիմության կողմից բացահայտորեն որակվում են որպես դավաճանական: Հանրային կարծիքն էլ քննադատորեն է տրամադրված: Միայն ընտրողների 11 տոկոսն է հայտարարում, որ եթե ընտրություններն այսօր կայանային, կընտրեին Փաշինյանի ՔՊ կուսակցությանը: Սակայն ընդդիմադիր ուժերն էլ, որոնք ղեկավարում են Քոչարյանն ու Սարգսյանը՝ որպես քաղաքական ծանրքաշայիններ, գտնվում են ոչ այնքան լավ վիճակում: Սա կարող է տարածք բացել «երրորդ ֆիգուրների» համար, ինչպես դա եղավ հենց Փաշինյանի պարագայում՝ 18 թվականին: Հնարավոր է նաեւ, որ նախընտրական արշավը կենտրոնանա արտաքին քաղաքականության հարցերի վրա: Փաշինյանի կուսակցությունը կփորձի իրեն ներկայացնել որպես խաղաղության կուսակցություն, հակառակ բոլոր նրանց, որոնց կհայտարարի երկիրը պատերազմի տանողներ, եւ պաշտպանելու է իր պրագմատիկ բալանսավորված արտաքին քաղաքականության գիծը:

Հանրային կարծիքն այս առումով պառակտված է: Հայաստանցիների 47 տոկոսն աջակցում է Բաքվի հետ խաղաղության պայմանագրի ստորագրմանը: 40 տոկոսը դեմ է դրան: Համարյա բոլոր քաղաքացիները, սակայն, պահանջում են, որ պայմանագրի տեքստը հրապարակվի նախքան ստորագրումը, ինչին Փաշինյանը պատրաստ չէ գնալ՝ ակնարկելով, որ կա անհրաժեշտություն՝ գնալու ցավոտ զիջումների: Եթե մեկ տարի առաջ ԵՄ անդամակցությանը կողմ էր Հայաստանի բնակչության 51 տոկոսը, ապա հիմա այդ թիվը չի գերազանցում 40 տոկոսը: Մինչդեռ 60 տոկոսը կողմ է, որ Ռուսաստանը ներգրավվի Ադրբեջանի հետ խաղաղության գործընթացին: Առայժմ դրանք դեռ թվեր են, որոնք պետք է դիտարկել չափազանց մասնատված կուսակցական համակարգի կոնտեքստում, ինչը կարող է ձեռնտու դառնալ ՔՊ-ին՝ հաշվի առնելով խոշորագույն ընդդիմադիր կուսակցությունների վարկանիշների ցածր վիճակը: Խաղաղության եւ պատերազմի միջեւ ընտրություն կատարելու՝ ընտրողներին ուղղված հարցը կարող է Փաշինյանին հաղթանակ բերել: Հաջողության դեպքում Փաշինյանը կարող է ապահովել աննախադեպ քաղաքական կայունություն Հայաստանի համար, ինչը կարող է ապահովել, որ խաղաղությունն առաջ մղվի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԵՌԸ ԴՈՒՔ ԵՔ, ՈՉ ԹԵ ԹՈՇԱԿԱՌՈՒՆ

Ինչ քաղաքացիները տարակուսած են՝ ինչպես ապրել պետության տված թոշակով՝ արձանագրելով, որ կյանքը բավականին թանկացել է, պետությունը կենսաթոշակառուներին առաջարկում է թոշակները ստանալ բացառապես քարտային համակարգով եւ անկանխիկ առեւտուր անել: Օրերս աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը թոշակառուներին առաջարկում էր, որ եթե նրանք մինչեւ մարտի 5-ը ինքնուրույն բանկային քարտեր ձեռք չբերեն, իրենք քարտերը կառաքեն: Իսկ մարզերում ապրող մարդկանց համար հեշտ չէ բանկային քարտ բացելը, դրա համար պետք է շրջկենտրոն գնալ:

Նշենք, որ դեկտեմբերին Ազգային ժողովն օրենք է ընդունել, համաձայն որի՝ ապրիլի 1-ից բոլոր կենսաթոշակներն ու նպաստները պետք է վճարվեն անկանխիկ եղանակով: Հունվարի 1-ից անկանխիկ գնումների դեպքում կենսաթոշակառուների հետվճարը նախկինում գործող 12%-ի փոխարեն դառնում է 20%, իսկ հետվճարի առավելագույն չափը ամսական 6 հազարի փոխարեն սահմանվել է 10 հազար դրամ, ինչն իշխանությունը թոշակառուներին արված մեծ լավություն է համարում:

Մենք Հրազդանում հարցումներ արեցինք՝ թոշակների ստացման կարգի, կենսաթոշակառուների հետվճարի մասին, եւ թե ինչ դժվարությունների են հանդիպում թոշակառուները: Հարցվածների մի մասը, որ միայնակ թոշակառուներ էին, նշում էին, որ սա իրենց համար ձեռնտու տարբերակ չէ, քանի որ չեն կարողանում 15 օրվա ընթացքում ողջ գումարը ծախսել եւ չեն օգտվում հետվճարից: «Թող իմ թոշակը բարձրացնեն 10 հազար դրամով, կանխիկ ստանամ, գիտեմ, թե ուր եւ որտեղ կծախսեմ: Յանի փող են տալիս, հիմա էլ՝ անկանխիկ: Մենակ կին եմ, 53 հազար թոշակ եմ ստանում, ասենք, նստում եմ տրանսպորտ՝ Հրազդանից գնում եմ Մարտունի, հիմա դուք ինձ ասեք՝ ես քարտով ո՞նց վճարեմ ավտոբուսի փողը: Որ իրենք Երեւանում են, գիտեն, թե մարզերում էլ մարդիկ կարող են տրանսպորտը քարտով վճարել: Պետությունը թոշակառուի մասին չի մտածում, իրենց ոնց ձեռք է տալիս, էդ ձեւով էլ անում են: Պահանջում ենք, որ մեր թոշակները բարձրացնեն: 30 տարի ես կարի ֆաբրիկայում եմ աշխատել, աչքերս քոռացրել եմ, կար եմ արել, որ իմ ծերության օրը թոշակ տան, հետն էլ ասեն, թե թոշակս ես ոնց ծախսե՞մ»,- մեզ հետ զրուցում ասաց միայնակ թոշակառու 67-ամյա տիկին Արեւիկը:

«Թոշակս 42 հազար դրամ է, հունվարին թոշակիցս 20 հազար դրամ քարտով առեւտուր եմ արել, ամսի 17-ն էր, տեսա, որ թոշակիս վրա 4 հազար դրամ է ավելացել: Ստացվում է, որ թոշակս ավելացել է 4 հազարդրամով: Ես չեմ կարող ողջ թոշակս ծախսել մինչեւ 17-ը: Ամսի 17-ից հետո ինչո՞վ ապրեմ: Հիմա նոր եմ հասկանում, թե վարչապետն ինչի մեր թոշակները չի բարձրացնում, անամոթաբար էլ ասում է՝ 10 հազար դրամով թոշակը բարձրացնենք, թոշակառուն ի՞նչ կանի: Թող բարձրացնի, իր ի՞նչ գործն է, թե ես ոնց կծախսեմ»,-ասաց 64-ամյա Ամալյան, որն ապրում է հաշմանդամ աղջկա հետ:

78-ամյա տիկին Ռիման էլ ասաց, որ դժգոհ է թե՛ թոշակների ստացման կարգից, թե՛ նախարարից. «Ես հետեւում եմ մեր սոցապնախարարի ելույթներին, շատ բարկացա, որ նախարարն ասում էր, թե թոշակառուներն իրենց համար բեռ են, բեռ են աշխատող քաղաքացիների համար, քանի որ էդ քաղաքացիների վճարած հարկերից են թոշակ ստանում: Խոսքս տեղ կհասցնեք՝ քաղաքացիների համար բեռը դուք եք, ոչ թե թոշակառուն, որ միլիոններով պարգեւավճար ստացաք քաղաքացիների հարկերից: 78 տարեկան եմ, կարող է՝ 50 տարի էլ ապրում եմ, ո՞նց կարող է նախարարն իրեն թույլ տա՝ էդպիսի բան ասի»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱԿՆԱԴԱՐՁ

ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ՖԵՅՍԲՈՒՔՅԱՆ ԷՋԵՐԸ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՉԵՆ

Փետրվարի 17-ին իր ծննդյան 45-րդ հոբելյանն է նշել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: ՔՊ-ականներն այդ օրը իրար հերթ չտալով՝ նախարարին շնորհավորական ուղերձներ էին հղում, պաթետիկ տեքստեր ծռնում եւ այլն: Մենք նկատեցինք, որ նման գրառումներով են հանդես գալիս նաեւ մի շարք հայաստանյան դպրոցների ֆեյսբուքյան էջեր, անգամ Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ֆեյսբուքյան էջը: Նկատենք, որ մեզանում սա ընդունված պրակտիկա չէ: Կրթության բազմաթիվ նախարարներ ենք ունեցել, սակայն նրանցից եւ ոչ մեկին այսպես հրապարակավ ծռներ չեն նվիրել: Ի դեպ, Ժաննա Անդրեասյանն այն նախարարն է, որը մշտապես հայտարարում է, որ դպրոցներում հովանավորչությունը, դրամահավաքը պետք է խստիվ արգելվեն, սակայն փաստացի դեմ չէ քծնանքին: Մենք առանձնացրել ենք մի քանի կրթական հաստատությունների, դպրոցների ֆեյսբուքյան էջերի շնորհավորական ուղերձները, որոնք ուղղված են տիկին նախարարին:

վերափոխմանն ուղղված նախաձեռնությունները եւ կառավարման նոր մոտեցումները կարեւոր դեր ունեն կրթության որակի բարձրացման, սովորողների գիտական մտածողության զարգացման եւ ժամանակակից կրթական միջավայրի ձեւավորման գործում: Տիկին Անդրեասյանի առաջնորդությամբ հանրակրթության համակարգը քայլ առ քայլ դառնում է առավել մրցունակ, արդիական եւ միջազգային չափանիշներին համահունչ՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ պատասխանատու, գրագետ եւ մարդասիրական արժեքներով առաջնորդվող սերունդների ձեւավորման համար: Կրթական քաղաքականության այս ուղղությունները դպրոցական համայնքներին հնարավորություն են տալիս արդյունավետ կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթացը եւ արծագանքել ժամանակակից կրթական մարտահրավերներին: Բախշյանական ընտանիքն ի սրտե մաղթում է տիկին Անդրեասյանին քաջ առողջություն, անսպառ եռանդ, նոր գաղափարների իրագործում եւ շարունակական

Ժաննա Անդրեասյանին՝ ծննդյան հոբելյանի առթիվ:

Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներն ու ռազմավարական մոտեցումները կարեւոր դեր ունեն ապագա բժիշկների որակյալ կրթության, գիտական մտածողության ձեւավորման եւ առողջապահական համակարգի կայուն զարգացման գործում: Ձեր աջակցությամբ կրթական միջավայրը դառնում է ավելի մրցունակ, արդիական եւ միջազգային չափանիշներին համահունչ, ինչը նպաստում է պատասխանատու, գրագետ եւ մարդասիրական արժեքներով առաջնորդվող բժիշկների պատրաստմանը: Ի սրտե, համալսարանական ընտանիքը մաղթում է Ձեզ քաջ առողջություն, անսպառ եռանդ եւ հաջողություն՝ ի նպաստ մեր երկրի կրթության ու առողջապահության ապագայի»:

Կարեն Դեմիրճյանի անվան թիվ 139 դպրոց. «Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան հ. 139 ավագ դպրոցը շնորհավորում է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին՝ տարեդարձի առթիվ: Դպրոցը շատ բարձր է գնահատում Ձեր՝ հայոց

էջում գրելով. «Սրտանց շնորհավորում ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին՝ ծննդյան տարեդարձի առթիվ:

Ձեր գործունեությունը՝ ուղղված Հայաստանի մշակութային կյանքի զարգացմանը, արժանի է բարձր գնահատանքի: Առանձնակի կարեւորում ենք Ձեր հետեւողական ջանքերը դասական երաժշտության զարգացման, հանրայնացման եւ գալիք

Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 դպրոց. «Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի աշխատակազմը սրտանց շնորհավորում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանին՝ ծննդյան հոբելյանի առթիվ: Վերջին տարիներին հանրակրթության ոլորտում իրականացվող համակարգային բարեփոխումները, կրթության բովանդակային

հաջողություններ՝ ի նպաստ Հայաստանի հանրակրթության ոլորտի զարգացման ու մեր երկրի ապագայի»:

Ի դեպ, երբեմնի ընդդիմադիր Անահիտ Բախշյանը՝ Յուրի Բախշյանի այրին էլ է այս բոցաշունչ ուղերծի տակ գրել. «Սրտանց շնորհավորում եմ, տիկին Անդրեասյան»:

ԵՊԲՀ. «Սրտանց շնորհավորում ենք ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար

պետականության հզորացմանը նպաստող ու ազգային կրթության միջազգայնացմանը միտված քայլերը: Դպրոցի ողջ անձնակազմը

շնորհավորում է Ձեզ, մաղթում առողջություն, տոկունություն՝ Ձեր նոր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար, ընտանեկան բարօրություն»:

Այս տարի նախարարի ծննդյան օրվա կապակցությամբ ծռն է հղել նաեւ Ֆիլհարմոնիկը՝ ֆեյսբուքյան

սերնդի գեղագիտական դաստիարակության գործում: Մաղթում ենք Ձեզ անսպառ եռանդ՝ Ձեր պատասխանատու առաքելության մեջ, եւ նորանոր ձեռքբերումներ՝ ի նպաստ մեր երկրի մշակութային վերելքի:

Թող Ձեր կյանքն ու աշխատանքային ուղին մշտապես լինեն հարմոնիկ, ինչպես լավագույն սիմֆոնիաները, իսկ Ձեր բոլոր նախաձեռնությունները պսակվեն հաջողությամբ»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒՄ ԷՐ՝ «ՁԳՁԳԵԼ» Է ՆԿԱՐԸ, ՈՐ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐ ՎԱՅԵԼԻ

Գեղանկարիչ Գեորգի Թովմասյանի անհատական ցուցահանդեսը՝ Վանաձորում

Նա արարել է շուրջ 2 հազար գեղանկարչական կտավ՝ բնանկարներ, դիմանկարներ, եկեղեցիներ, նատյուրմորտներ, որոնք պահպանվում ու ցուցադրվում են նախկին ԽՍՀՄ երկրների թանգարաններում, Վանաձորի կերպարվեստի թանգարանում, «Մաշտոց» ՀԿ գեղարվեստի ցուցասրահում, Հայ առաքելական եկեղեցու թեմերում, արտերկրի մասնավոր հավաքածուներում: Նա Վանաձորի պետական համալսարանի արվեստի ամբիոնի հիմնադիրն էր եւ մինչեւ կյանքի վերջը՝ նրա վարիչը: Հեղինակել է «Գեղանկար» բուհական ուսումնական ձեռնարկը եւ անթիվ գիտամանկավարժական ու արվեստաբանական հոդվածներ: Անհատական ցուցահանդեսներով հանրությանը ներկայացել է 16 անգամ Հայաստանում եւ աշխարհի տարբեր երկրներում:

Նրա արվեստի մասին լույս են տեսել բուկլետներ, ալբոմներ, կատալոգներ, կյանքին ու ստեղծագործությանը նվիրված գրքեր ու ժողովածուներ: Նրան է նվիրված նաեւ լոռեցի հայտնի գրող Վալտեր Թոռոսյանի «Գույների սիմֆոնիա» վիպակը: Նրա ստացած մրցանակների, ոսկե հուշամեդալների,

պարգեւատրումների, շնորհակալագրերի ու պատվոգրերի ցանկը 100-ից ավելի է: Նա նաեւ շենշող մարդ էր՝ բարի, անաչառ ու խոսքաշատ: Ընկերական հավաքներում «երդվյալ թամադա» էր, կենացները համեմում էր սեփական բանաստեղծական տողերով. «Ես ջահել չեմ՝ տարիքս վկա, Ու սիրտս թեեւ առաջվանը չէ, բայց երբ տեսնում եմ մի նոր աղջկա, հալվում, մաշվում եմ առաջվա նման...»:

Նա Հայաստանի վաստակաշատ գեղանկարիչ, արվեստի տեսաբան, պրոֆեսոր Գեորգի Թովմասյանն էր, որ Վանաձորի Կառլոս Աբովյանի անվան պատկերասրահում օրերս հնարավորություն ունեցավ 17-րդ անգամ ներկայանալ հանրության իր վառվռուն կտավներով, այս անգամ՝ հետմահու: Լրացել է Մաեստրոյի ծննդյան 90-ամյակը: Պատկերասրահի առաջին հարկի սրահում ասեղ գցելու տեղ չկար: Եկել էին նրա արվեստի երկրպագուները: Գեղանկարչի կենսագրությունը ներկայացրեց դերասան, ասմունքող Ջիվան Սարգսյանը: Ելույթներում ընդգծեցին նրա մարդկայնությունը, անսպառ եռանդն ու աշխատասիրությունը, թեմաների բազմաբովանդակությունը, մարդու ներաշխարհի թափանցելու զարմանալի կարողությունը, լավատեսությունն ու աշխարհի գույների յուրօրինակ ընկալումը:

Մոտքիցս երբեք չի գնա. Մաեստրոն առանձնակի հիշողություններ ուներ Ամենայն հայոց 131-րդ կաթողիկոս Գարեգին Ա-ի հետ հանդիպումներից: Նա հրավիրվել էր Սուրբ Էջմիածին՝ կաթողիկոսին կտավի վրա պատկերելու: Նկարելու ընթացքում երկար զրուցել էին, եւ ասում էր, որ այդ օրերն իր կյանքի լավագույն պահերն են եղել: Խոստովանում էր՝ խորամանկ ժպիտով, որ երեք օր «ձգձգել» Է՝ նկարն ուշ ավարտելու համար, որպեսզի Մեծ անհատականության ներկայությունը հնարավորինս երկար վայելի: Մինչդեռ կաթողիկոսը ծանր ու պատասխանատու առաքելություն էր ստանձնել՝ նա վերափոխում էր թեմական կառուցվածքը՝ Հայ եկեղեցու աշխատանքն առավել նպատակաուղղված դարձնելու համար: Նրա հոգածությամբ հայաստանյան նախկին չորս թեմի փոխարեն ստեղծվեց ութ թեմ, հիմնվեցին նաեւ Ուկրաինայի եւ Հարավային Ռուսաստանի թեմերը: Նա միաժամանակ հոգեւոր, վարչական ու կազմակերպչական մեծածավալ աշխատանք էր իրականացնում՝ ամրապնդելով Եկեղեցու ներկայությունն ու գործունեությունը: Գեղանկարիչը հպարտությամբ էր ասում. «Այդ նկարն իմ լավագույն ստեղծագործությունն է, Վեհափառն էլ... դա գիտեր»:

Կյանքի վերջին ամիսներին անկողնուն գամված էր: Այցելում

էինք, դարձյալ ու դարձյալ հարցնում կաթողիկոսի դիմանկարի արարման պատմությունը: Նա ոգեւորվում էր, դեմքը փայլում էր, հիվանդությունը կարծես ժամանակավորապես հեռանում էր նրանից: Հենց դրա համար էլ այդ օրերի մասին էինք հարցնում:

Ցուցահանդեսին ներկայացված է գեղանկարչի 32 ստեղծագործություն, որոնցից 4-ը՝ նրա նվերները, պահվում են թանգարանի հավաքածուում: Նախաձեռնությունը դստեր՝ Արմինեի, եւ նրա զավակների՝ Սեւակի ու Մենուայի (վերջինս ստեղծել է «Գեորգի Թովմասյան» հիմնադրամը), ինչպես նաեւ՝ թանգարանի հանրության ջանքերի արդյունքն էր: Լոռին հերթական անգամ մեծարեց իր մեծին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԻՍԿ ԻՆՔՆԱԿՐԹՎԵԼՆ ԱՐԴԵՆ ՈՒՇ Է

Հիշողության կորստով (ամնեզիա) չտառապողները հաճախ ու ցավով են հիշում ՀՀ վարչապետի՝ ի լուր աշխարհի հնչեցրած «Արցախը Հայաստան է, եւ վերջ» աշխարհացունց պոռթկումը: Ներկայիս պես-պես քաղաքագետների շարքերում չգտնվեց մեկը, որ կտրիճանար ու վերլուծեր այդ հուզառատ (աֆեկտիվ) ճիչը հնչեցնելու պահի եւ տեղի առեղծվածը, վարչապետի խոսքով՝ «հայեցողական հիմքը»:

Ինչպե՞ս չցնծալ՝ տարածաշրջանում նորաթուխ անկախ պետականությունը «հաղթել» էր միջազգային իրավունքի անարդարությանը, «ծնկի էր բերել» գերհզոր պետություններին, պատմական փաստարկներով «զարմացրել», «խեղճացրել» էր միջազգային կառույցներին: Այդ համատարած ցնծությունը տխրեցրել էր ՀՀ հիմնադիր նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին, ցավ պատճառել, որ հայտնվել է մեկը ու այդ մեկը կործանելու է եւ Արցախը, եւ Հայաստանի մի մասը: ՀՀ առաջին նախագահը փորձեց նորագույն քաղաքագիտական դրույթներով մեկնաբանել ճակատագրական այդ քայլը, բայց ալեկոծված ամբոխն անհողդողդ էր: Ունեցանք գովազդա-քաղաքական ինտերմեդիա՝ «ինչպես է գավառականությունը դառնում գաղափարախոսություն» թեմայով թատերախաղում: Եվ «խաղաղության մունետիկ» ինքնահռչակ վարչապետը դրեց գալիք փոքր ու մեծ աղետների «հայեցողական հիմքը». պետական մտածողությունը վերածեց անիմաստ բառակույտի, ազգային արժեքները նետեց աղբաման, վերաշարադրեց պատմական հիշողությունը, հայրենասիրությունը փոխեց հարսանքաճառի: Այսքանից հետո էլ ուզում է Հայոց (ներողություն՝ «իրական Հայաստանի») պատմության մեջ անմահանալ որպես «խաղաղության պատգամաբեր»: Սակայն ինչ խաղաղություն, երբ խաղաղության պայմանագիրը լիովին չի փաստաթղթավորված (մի կարեւոր ստորագրություն պակասում է): Գուցե ժամանակակից միջազգային հարաբերություններում բանավոր պայմանավորվածությունները լիովին բավարար են՝ հանրությանը «երջանկացնելու» համար, այդքան պարզ ու հե՞շտ... Հանճարեղ է:

Շատ չանցած պարզվեց, որ «Արցախը Հայաստան է, եւ վերջ» պոռթկումը, առանց «հայեցողական հիմքի», անբովանդակ, տղայական ճիչ էր, ենթատեքստում՝ գալիք աղետների, կորուստների ծանուցում: Առաջին ծանուցումը 1998-ին էր, երբ ՄԱԿ-ի մասշտաբով, մի քանի անգամ Հայաստանի ճակատին դաջվեց «ագրեսոր» տիտղոսը: Իսկ 2018-ին դրվեց կապիտուլյանտի (պարտվողի) կարգավիճակի հիմքը: Սա գալիք աղետների երկրորդ ծանուցումն էր: Աչքաբաց մարդիկ գիտեն, որ կապիտուլյանտն իր պարտությամբ միայն հրադադար կարող է բերել, որին հետեւում է հաղթողին պատճառած վնասի փոխհատուցումը (կոնտրիբուցիա) բոլոր հնարավոր միջոցներով՝ ընդհուպ մինչեւ տարածքային ամբողջականությունից կտորներ հանձնելու գնով, անկախ պետականությանը պարտադրված սահմանադրական եւ այլ իրավական սահմանափակումներով, թե չէ՝ «պատերազմը կա ու կա», հասկացնում է վարչապետը: Անշուշտ, ունենք հրադադար (խոստացել են այն պահպանել մինչեւ հունիս՝ ԱԺ ընտրություններ), թեպետ վարչապետի թեթեւ խոսքով «հրադադարն» ու «խաղաղությունը» անսխալական «հոմանիշներ» են:

Հայաստանի հանրության զգալի մասը համոզված է, որ այս ամենը, ինչը ժառանգել է Հայաստանը վերջին 7,5 տարիների (ոմանց համար՝ 28 տարիների) ընթացքում, ջայլամային քաղաքականություն է: Իսկ գործող իշխանությունը (ի հեճուկս բոլորի) շողոքորթում է հանրությանը, թե հպարտացեք «խաղաղաբեր» մեզնով եւ մեր «ճկուն» դիվանագիտությամբ:

Ակներեւ է, որ Հայաստանի իշխանության թիկունքն ամրացավ, երբ Եվրամիությունը խոստացավ ՀՀ գործող իշխանության թախանձանքը կատարել՝ 15 միլիոն եվրո տրամադրել՝ ԱԺ ընտրությունների «ազնիվ եւ արդար» ընթացքն ապահովելու համար: Կասկած չկա, որ այդ քայլով ԵՄ-ն առավել շահագրգռված է գործող ՀՀ իշխանությունների վերարտադրությամբ, քան ՀՀ շարքային քաղաքացիները: Այդ միջամտությամբ ԵՄ-ն դառնում է անկախ Հայաստանի ներքին գործերին խառնվող արտաքին քաղաքական գործոն: Մի խոսքով՝ շահառու է: Եվ ինչո՞ւ չմիջամտի, երբ իրավիճակը (կոնյունկտուրա) նպաստավոր է, աջ ու ձախ նախընտրական քաղաքական «խցանումներ» են: Ասել, թե ԵՄ-ն չի գիտակցում իր քայլի բացահայտ անօրինականությունը, սուտ կլինի: Եվրամիությունը տեսնում է, թե ով է հեղինակազուրկ (մարգինալ) իր խնդրատուն, տեսնում է հայաստանյան հանրության անտարբերությունը, լքվածությունը: Տեսնում ու լիցքավորվում է, որ մեկ-մեկ կարելի է որոշակի գումարով «կատակել»: Իրադրությունն այնքան նպաստավոր է քաղաքական «կատակի» համար, որ անկախ դիտորդները, ինչ-որ անօրինականություն նկատելու դեպքում, չտեսնելու կտան: Իսկ եթե լրջությամբ, ապա ցավալիորեն Հայաստանում ձեւավորվել է այսպիսի իրավիճակ. մաշվել է քաղաքացիական ուղղամտությունը, բթացել է իրավագիտակցությունը, նսեմացվում է անկախ պետականության գաղափարը, իսկ հանրային ընկալումը բեւեռվում է ապրուստի միակ միջոցի՝ ազգության եւ հայրենիք չունեցող փողի հանդեպ սիրո եւ հավատքի վրա:

Չնսեմացնենք Եվրամիությանը: Այն գրագետ ու լուրջ միջազգային կառույց է, քան ճանաչում ենք: ԵՄ-ն լրջանում է, երբ դիմացինը լրջմիտ, հավասարակշիռ, փորձառու, իրատես ու հեռատես պետական գործիչ է կամ ղեկավար: ԵՄ-ում սիրում են «կատակել» տարբեր իրադրություններում: ԱՄՆ փոխնախագահ Վենսի այցը Հայաստան ցույց տվեց, որ ամերիկացիներն էլ «կատակասեր» են: Բայց կատակ կա, որ կատակ է, եւ կատակ կա, որ կատակ չէ, ինչպե՞ս տարբերել: Տարբերել կարելի է, եթե իշխանությունները չստեն, չչափազանցնեն, իրենք իրենց չհակասեն, իսկ ինքնակրթվելն արդեն ուշ է:

Նկատելի է, որ շատերը տարակուսեցին, երբ ՀՀ վարչապետն ԱՄՆ փոխնախագահի այցը Հայաստան որակեց «պատմական»: Դիվանագիտական լեզվով՝ պատմական կարող է լինել, երբ դրական արդյունքն ակնհայտ է, սակայն նշված այցը զուտ խոստումների փաթեթ էր: Հետո, ըստ դիվանագիտական ենթակարգության (սուբորդինացիա), փոխնախագահի դիվանագիտական կարգավիճակը թույլ չի տալիս նրա այցը պատմական համարել:

ՀԳ. *Օրերը տաքանում են: Բակա-տաղավարային քննարկումները շարունակվում: Ահա մի քանիսը:*

- 1998-ից այս կողմ փորձ է արվում «ոչմիթիզականությունից» «ազգային գաղափարախոսություն» սարքել: Ունեցանք ազգային գերեզմանափորություն:

- Հարց հնչեց. «Լավ, գործող իշխանության եւ անթիվ-անհամար, փոքր ու մեծ ընդդիմադիր կուսակցությունների միջեւ գոնե մեկ ընդհանրություն չկա՞...»: «Ո՞նց չկա, կա». ՀԱԿ-ի դեմ, ձեռք-ձեռքի տված, պայքարում է թե՛ իշխանության, թե՛ ընդդիմության գրեթե ողջ տեսականին: Իսկ թե ինչի կհանգեցնի ձեռք-ձեռքի տված այդ «ախպերությունը», կպարզվի ամռանը:

Արամայիս ԱՍԼԱՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 20.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՉԱԽՈՅԱՆԻ ՀԱՇՎԱՐԿՈՎ՝ 52 ՄԻԼԻՈՆ 500 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ ԱՍՖԱԼՏ ՔԻՉ ԵՆ ԱՐԵԼ

Երեւանցիների դաժան քննադատության թիրախում հայտնված քաղաքային իշխանությունը փորձում է ձախողման մեղավոր կարգել իր հիմնական քաղաքական հակառակորդին՝ տեղեկություն տարածելով, թե քայքայվող ասֆալտն արել է Ռոբերտ Քոչարյանի խնամուն պատկանող ԱԱԲ ընկերությունը: Երկրորդ նախագահի գրասենյակի ղեկավար Բագրատ Միկոյանը սա հերքել է՝ «հերթական հիմարություն» անվանելով եւ բացահայտելով, որ Քոչարյանի երեք խնամիներից որեւէ մեկին ասֆալտապատման որեւէ ընկերություն չի պատկանում:

Բայց հունվարից սկսած՝ Երեւանի փողոցներում ասֆալտը քայքայվել է, հսկայական փոսեր են առաջացել, մոտավորապես նույն պատկերը նաեւ մարզերում է: Օրինակ՝ Աբովյան քաղաքում ձյունը հալվելուց հետո անտանելի փոսեր են առաջացել, սակայն որեւէ մեկը դեռեւս փոսալցման աշխատանքներ չի ձեռնարկել: Ակտիվիստ **Արթուր Չախոյանը**, «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով ասֆալտի որակին, ասում է. «Գայի պողոտայի ասֆալտը, ըստ փաստաթղթերի, պետք է լինի 5 սմ հաստությամբ, այլ ոչ թե 2.5-4 սմ, հուսամ՝ գիտակից մարդիկ հասկանում են, որ ատկատով անորակ փռված ասֆալտի քանդվելն աղից չէ, այլ հենց անորակ կատարված աշխատանքի հետեւանքն է: Ես անձամբ բազմիցս եմ ականատես եղել, թե ինչպես են առանց փոշեզրկման՝ հողի վրա ասֆալտ անում, ավելին՝ այդ ամենը տեսաձայնագրել ու հրապարակել եմ դեռ վաղուց: Նման օրինակները բազմաթիվ են: Ակնհայտ է, որ եթե վատ ասֆալտապատումը չի կրում իրավական հետեւանքներ, եթե որեւէ մեկը չի ենթարկվում պատասխանատվության, նշանակում է, որ գործ ունենք բացահայտ հովանավորչական բնույթի իրավիճակի հետ: Հակառակ դեպքում՝ ինչո՞ւ Երեւանի քաղաքապետարանն այս ամենին պատշաճ իրավական գնահատական չի տալիս: Եթե մենք Երեւանի քաղաքապետարանից մեկնաբանություն պահանջենք, կասեն, որ ամեն բան ճիշտ են արել, սակայն մենք տեսնում ենք, որ նոր ասֆալտները քանդվում են: Միայն Գայի պողոտայում 50 հազար քառակուսի է, 5 սմ ասֆալտի համար Երեւանի քաղաքապետարանը, ըստ պայմանագրի ծավալաթերթի, վճարում է 5 հազար 255 դրամ: Եթե 5 սմ ասֆալտից 1 սմ բարակ ասֆալտ են անում ողջ 50 հազար քմ տարածքում, ապա ընդհանուր 52 միլիոն 500 հազար դրամի ասֆալտ քիչ են արել, եւ դա՝ միայն Գայի պողոտայում, չենք խոսում ողջ մայրաքաղաքի մասին»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am